ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

## 2018

Զարգացումը
Կարգավորումը
Վերահսկողությունը

2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Նախաբան ..... 3

*Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 2018 թվականին* ..... 4

*Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և սպառողների շահերի պաշտպանությունը 2018 թվականին* ..... 10

*Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 2018 թվականին* ..... 14

*ՀՀ ֆինանսական համակարգը 2018 թվականին* ..... 16

*Բանկեր* ..... 16

*Ընդհանուր դրույթներ* ..... 16

*Բանկային համակարգի կապիտալը* ..... 18

*Բանկային համակարգի պարտավորությունները* ..... 19

*Բանկային համակարգի ակտիվները* ..... 21

*Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները* ..... 23

*Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը* ..... 25

*Վարկային կազմակերպություններ* ..... 33

*ՀՀ ապահովագրական շուկա* ..... 37

*Արժեթղթերի շուկայի մասնակիցներ* ..... 45

*ՀՀ պարտադիր կենսաթոշակային համակարգ* ..... 48

*Վճարահաշվարկային կազմակերպություններ* ..... 50

*Վճարահաշվարկային համակարգ* ..... 52

*Կարգավորման և վերահսկողության զարգացման հեռանկարները* ..... 57

Հավելվածներ ..... 61

# ՆԱԽԱԲԱՆ

2018 թվականին տնտեսական ակտիվության վերականգնման և եկամուտների աճին զուգահեռ ֆինանսական համակարգի մասնակիցները ցուցաբերել են բարձր ակտիվություն վարկային և ավանդային շուկաներում: Ֆինանսական համակարգի միջնորդությունը բնութագրող ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցության և վարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 4.0 և 4.1 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 97.6% և 53.9%:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 85.1%-ը: Բանկային համակարգում արձանագրվել է հաշվեկշռային ամփոփ ցուցանիշների զգալի աճ: Վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների ու ֆինանսական համակարգի մյուս մասնակիցների հիմնական ցուցանիշները ևս դրսևորել են կայուն աճի միտումներ:

Բանկային համակարգի կայունությունը բնութագրող կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշները շարունակում են պահպանվել պահանջվող նվազագույն սահմանաչափերից բարձր: 2018 թվականի վերջի դրությամբ ընդհանուր կապիտալի համարժեքությունը կազմել է 17.7%[1], իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները՝ համապատասխանաբար 27.3% և 116.6%[2]: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները տարվա ընթացքում ցուցաբերել են նվազման միտում:

Ֆինանսական համակարգի կայունության խնդրից ելնելով՝ Կենտրոնական բանկը շարունակել է ֆինանսական հաստատությունների գործունեության կարգավորման ու վերահսկողության արդյունավետության բարձրացման և սպառողների շահերի պաշտպանության ու հասարակության տարբեր նպատակային խմբերի ֆինանսական կրթման աշխատանքները:

*[1] Նվազագույն նորմատիվային սահմանաչափը՝ 12.0%:*
*[2] Նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15.0% և 60.0%:*

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

Տնտեսության իրական և ֆինանսական հատվածների արդի զարգացումների համատեքստում 2018 թվականին շարունակվել են ֆինանսական հատվածի կարգավորման դաշտի կատարելագործման աշխատանքները:

## Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ

### *Օրենսդրական փոփոխություններ*

2018 թվականին փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ««Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքներում:

Նշված օրենքներում փոփոխությունները նպատակ ունեն.

1. վերացնել արժեթղթավորման գործընթացներում մինչ այժմ գործող հնարավոր խոչընդոտները,
2. գործող օրենսդրությունը համապատասխանեցնել առկա զարգացումներին,
3. ներդրումների համար ապահովել առավել հստակ և գործուն իրավական լուծումներ,
4. ստեղծել ՀՀ-ում ապահովված հիպոտեկային պարտատոմսերի շուկան զարգացնելու խթաններ,
5. բարձրացնել ՀՀ-ում թողարկվող ապահովված հիպոտեկային պարտատոմսերի գրավչությունը օտարերկրյա ներդրողների համար:

*Ենթաօրենսդրական փոփոխություններ*

*Բանկային համակարգի գործունեության կարգավորման դաշտում 2018 թվականին կատարված փոփոխություններ*

1. Ընդունվել է «Բանկերի կողմից օրենքով սահմանված գործառնությունների պատվիրակման համար կենտրոնական բանկի նախնական համաձայնության տրամադրման կարգը»: Կարգը սահմանում է բանկերի կողմից գործառնությունների պատվիրակման և ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախնական համաձայնության տրամադրման ընթացակարգերը:
2. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ում: Սահմանվել են առևտրային բանկերում երկրի ռիսկի, չհեջավորված վարկառուներից բխող վարկային ռիսկի գնահատման, ինչպես նաև մոդելների ներդրման գործընթացի նվազագույն պահանջներ:
3. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում:
   Բարելավումներ են իրականացվել պարտադիր պահուստավորման տուգանային ռեժիմներում, ինչպես նաև կատարվել են փոփոխություններ կենտրոնացման ռիսկի նվազեցման և արտահանող կազմակերպություններին տրված վարկերի ռիսկի կշիռների ճշգրտման ուղղությամբ:

*Ապահովագրական համակարգի գործունեության կարգավորման դաշտում 2018 թվականին կատարված փոփոխություններ*

1. «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ ապահովագրական ընկերությունների գործունեության վերաբերյալ վերլուծությունների իրականացման և վիճակագրության հավաքագրման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով:
2. «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՌԱՄԵԼՍ) հաշվարկման մեթոդաբանությունը» կանոնակարգ 3/08-ում ՔԱՌԱՄԵԼՍ գնահատականի հաշվարկում թվաբանական միջինի փոխարեն նախատեսվել է կշռված միջինի մեթոդի կիրառում՝ նպատակ ունենալով ՔԱՌԱՄԵԼՍ գնահատականի միջոցով առավել ճշգրիտ արտացոլելու ապահովագրական ընկերությունների ռիսկայնության մակարդակը:
3. «Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ում պահանջներ են սահմանվել ապահովագրական ընկերությունների կողմից վերաապահովագրության պայմանագրերի պատշաճ փաստաթղթավորման, վերաապահովագրության հետ կապված ռիսկերի, մասնավորապես՝ իրացվելիության ռիսկի բացահայտման ու կառավարման ընթացակարգերի, ինչպես նաև վերաապահովագրական բրոքերի ընտրության չափանիշների սահմանման նկատմամբ:

4. «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում իրականացվել են փոփոխություններ՝ նպատակ ունենալով բարձրացնելու ապահովագրական գործակալների մասնագիտական գիտելիքների մակարդակը, ապահովելու ապահովագրական գործակալների պատշաճ վարքագիծը, հստակեցնելու ապահովագրական գործակալների հաշվառման գործընթացը, ինչպես նաև ապահովելու ապահովագրական միջնորդների գործունեության պահանջների համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին և սկզբունքներին:

*Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով 2018 թվականին ընդունված և կատարված փոփոխություններ ու լրացումներ*

1. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում, «Ածանցյալ ֆինանսական գործիքների կարգավորումները» կանոնակարգ 4/18-ում, «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ում, «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգում», «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում և «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ում: Կատարված փոփոխություններն ուղղված են լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրողների ռիսկերի զսպմանը՝ մի կողմից սահմանափակելով ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների մուտքն այս շուկա, մյուս կողմից՝ զսպելով պրոֆեսիոնալ հաճախորդների շահերը վտանգող ռիսկերը: Փոփոխություններով սահմանվել է նաև ԵՄ դիրեկտիվներին համապատասխան պրոֆեսիոնալ հաճախորդների դասակարգման նոր ընթացակարգ՝ մի կողմից ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների շահերի պաշտպանվածության աստիճանի բարձրացման, մյուս կողմից՝ Կենտրոնական բանկի՝ որևէ բանով չհիմնավորված բեռը նվազեցնելու նպատակով: Կանոնակարգերի փոփոխություններով սահմանվել է նաև որակավորված ներդրողների գրանցման առավել պարզ և արագ գործընթաց:

2. Ընդունվել է «Ներդրումային ֆոնդի պահառուի կառուցվածքի և գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 10/31-ը, որն ուղղված է ներդրումային ֆոնդերի պահառուական գործառույթներում առկա ռիսկերի նվազեցմանը: Կանոնակարգով սահմանվել են տարբեր տեսակի ակտիվների

պահառության սկզբունքները, պահառուի կողմից ակտիվների տարանջատման և պահառուի հսկողական գործառույթների իրականացման սկզբունքները, պահառության պայմանագրի նկատմամբ պահանջները:

3. Լրացում է կատարվել «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ում: Նպատակ ունենալով ապահովելու ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) վաճառքի գործընթացում ներդրողների շահերի պաշտպանությունը՝ տվյալ որոշմամբ սահմանվել են ֆոնդի կառավարչի՝ փայերի վաճառքով զբաղվող աշխատակիցների գիտելիքների նկատմամբ պահանջներ:

4. Փոփոխություններ ու լրացումներ են կատարվել «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ում: Հաշվի առնելով, որ Կենտրոնական դեպոզիտարիային թույլատրվել էր իրականացնել դրամական միջոցների հաշվառման հաշիվների վարման գործառույթ, հետևաբար՝ Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության հետ կապված ռիսկերը զսպելու նպատակով սահմանվել էին տնտեսական նորմատիվներ, անհրաժեշտություն էր առաջացել կանոնակարգ 5/04-ով սահմանել նոր հաշվետվական ձևեր՝ դրամական միջոցների հաշվառման հաշիվներով կատարված գործառնությունների, դրանց մնացորդի և տնտեսական նորմատիվների հաշվարկման վերաբերյալ:

5. Ընդունվել է «Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները» կանոնակարգ 6/05-ը: Կանոնակարգի ընդունումը պայմանավորված էր ապահովված հիպոտեկային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի՝ առավել հստակ և արդյունավետ որակավորման ընթացակարգ սահմանելու անհրաժեշտությամբ:

***Վճարահաշվարկային համակարգի կարգավորման դաշտում 2018 թվականին կատարվել են հետևյալ փոփոխությունները և լրացումները***

1. Փոփոխություններ են իրականացվել «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ում, որոնց համաձայն սահմանվել է.
   - Վճարահաշվարկային կազմակերպության բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն2 նորմատիվ) պետք է կազմի է 100 տոկոս:
   - Վճարահաշվարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտ բանկերում հաշիվներ բացելու դեպքում անհրաժեշտ է, որ ոչ ռեզիդենտ բանկն ունենա միջազգային վարկանշային կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ:
   - Վճարահաշվարկային կազմակերպության կողմից հաճախորդներից ներգրավված, սակայն շահառուներին կամ վճարման շղթայում ներգրավված այլ մասնագիտացված միջնորդներին դեռևս չվճարված դրամական միջոցները, ինչպես նաև թողարկված էլեկտրոնային փողի դիմաց ներգրավ-

ված միջոցները պետք է ցանկացած պահի առանձնացված լինեն վճարահաշվարկային կազմակերպության սեփական միջոցներից և ստացման օրվան հաջորդող օրվանից պահվեն հատուկ բանկային հաշվի վրա: Այդ միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել, բռնագանձվել վճարահաշվարկային կազմակերպության այլ պարտավորությունների դիմաց կամ վճարահաշվարկային կազմակերպության սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց և կարող են ներդրվել միայն կանոնակարգ 17/02-ով սահմանված ակտիվներում:

2. Փոփոխություններ են կատարվել «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ում, որոնց համաձայն սահմանվել է, որ վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է լինել նաև բանկի գլխավոր հաշվապահի տեղակալի որակավորում ունեցող անձը:
3. Փոփոխություններ են իրականացվել ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ հաստատված «Ֆինանսական արտաքին էլեկտրոնային հաղորդագրությունների ֆորմատների ամփոփ կատալոգում», որոնց համաձայն սահմանվել է, որ էլեկտրոնային վճարումների համակարգում օգտագործվող վճարային հաղորդագրությունները կարող են կիրառվել նաև արտարժույթով փոխանցումների կատարման ժամանակ: Հստակեցվել են նաև հաղորդագրությունների կիրառման կանոնները:

***Սպառողների շահերի պաշտպանության և գործարար վարվելակերպի ոլորտի կարգավորման դաշտում 2018 թվականին լրամշակվել և փոփոխվել է.***

***«Ֆինանսական համակարգի մասնակիցներին ուղղված բողոքների հաշվառման, պահպանման և գրանցման ներքին գործընթացին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ»*** *կանոնակարգ 8/07-ը, որով սահմանվել են ֆինանսական կազմակերպություններում բողոքների վերաբերյալ ներքին տեղեկատվական բազա ունենալու պահանջներ: Դա հնարավորություն կընձեռնի նաև վեր հանելու սպառողների շահերի պաշտպանության ոլորտի համակարգային խնդիրները և մշակելու թիրախային քաղաքականություն:*

Ֆինանսական կազմակերպությունների և նրանց կողմից մատուցվող ծառայությունների թափանցիկության աստիճանի բարձրացման նպատակով լրամշակվել, փոփոխվել և հաստատման փուլում են՝

***«Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները»*** *կանոնակարգ 8/05-ը,* որով սահմանվել են հիպոտեկային և գյուղատնտեսական վարկերի վերաբերյալ սպառողներին տրամադրվող և բացահայտվող տեղեկատվության նկատմամբ պահանջներ, մշակվել են պարզ, ամբողջական և մատչելի քաղվածքներ և ծառայությունների էական պայմանների ձևաթերթեր:

Ստացված ազդակների և կատարված ուսումնասիրությունների հիման վրա նոր պահանջներ են սահմանվել սպառողական և հիպոտեկային վարկերի վաղաժամկետ մարման ժամանակ սպառողներին անհրաժեշտ տեղեկություններ բացահայտելու ուղղությամբ:

***«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը»*** *կանոնակարգ 8/03-ը,* որով հեռավար եղանակով ծառայություններ մատուցող կազմակերպությունները, փոխանակման կետերը և բրոքեր-դիլերները իրենց ծառայությունների էական պայմանների մասին կբացահայտեն լրացուցիչ տեղեկություններ: Զգոն լինելու և տեղեկացված որոշումներ կայացնելու նպատակով այսուհետ սպառողները գովազդների ժամանակ, կայքերում ծառայություններից օգտվելիս կտեսնեն հատուկ նախազգուշացում պարունակող տեղեկատվություն:

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

Ֆինանսական հաստատությունների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա վերահսկողական նպատակով մշտապես իրականացվում են վերլուծություններ: Նույն նպատակով ֆինանսական հաստատություններում կատարվում են նաև ստուգումներ:

Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական հաստատությունների վերահսկողության հիմնական ուղղություններն են.

- ֆինանսական ինստիտուտների գործունեության համապատասխանեցումը գործող կարգավորման դաշտին,
- կանոնակարգման դաշտի փոփոխություններին ընկերությունների գործունեության համապատասխանեցումը,
- ակտիվների որակի գնահատումը,
- ռիսկերի կառավարման համակարգը,
- ներքին հսկողության համակարգը,
- կորպորատիվ կառավարման սկզբունքների ապահովումը,
- գործունեության անվտանգության և հուսալիության պահանջների ապահովումը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
- թափանցիկության ապահովումը,
- սպառողների շահերի պաշտպանությունը,
- ծառայությունների մատուցման որակի գնահատումը,
- վերաապահովագրության ռիսկայնության մակարդակը,
- ապահովագրական հատուցումների արժանահավատությունը,
- տեխնիկական պահուստների հաշվարկի ճշտությունը,
- ազդագրի և/կամ առևտրի ազդագրի գրանցման գործընթացների կազմակերպումն ու վերահսկումը,
- հաշվետու թողարկողների կողմից հրապարակման ենթակա տեղեկատվության թափանցիկության, լիարժեքության և արժանահավատության ապահովման նկատմամբ վերահսկողությունը,
- արժեթղթերի հրապարակային առաջարկությամբ հանդես եկող անձանց գործողությունների՝ օրենսդրությանը համապատասխանության նկատմամբ վերահսկողությունը և այլն:

2018 թվականին Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից ֆինանսական ինստիտուտներում իրականացվել է 136 ստուգում:

*Աղյուսակ 1. Տեղերում ստուգումների քանակը և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը*

| Ցուցանիշներ | 2015 | 2016 | 2017 | 2018 |
|---|---|---|---|---|
| Ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը | 81 | 76 | 74 | 74 |
| Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների և գրավատների ընդհանուր ակտիվները | 3.712 տրլն դրամ | 4.516 տրլն դրամ | 4.997 տրլն դրամ | 5.857 տրլն դրամ |
| Ֆինանսական վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը | 45.8 մլրդ դրամ | 59.4 մլրդ դրամ | 67.5 մլրդ դրամ | 78.1 մլրդ դրամ |
| Տարվա ընթացքում իրականացված ստուգումների քանակը, այդ թվում՝ | 129 | 190 | 186 | 136 |
| բանկեր | 16 | 11 | 41 | 33 |
| վարկային կազմակերպություններ | 6 | 4 | 7 | 2 |
| ապահովագրական ընկերություններ | 3 | 8 | 30 | 8 |
| ներդրումային ընկերություններ | 3 | 4 | 1 | 2 |
| ֆինանսական շուկայի այլ մասնակիցներ (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն) | 101 | 163 | 107 | 91 |

### *Սպառողների շահերի պաշտպանություն*

Շարունակական են եղել ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական իրազեկման նպատակով իրականացվող միջոցառումները, որոնք ուղղված են ինչպես գործարար վարվելակերպի կարգավորմանն ու վերահսկողությանը, այնպես էլ հանրության ֆինանսական իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

***2018 թվականին ՀՀ ԿԲ-ն շարունակել է գործարար վարվելակերպի վերահսկողության միջոցառումները.***

- Տեղերում ստուգումների միջոցով տարբեր ֆինանսական կազմակերպություններում կատարվել են ծառայությունների մատուցման պատշաճության, բողոքների ու վեճերի լուծման, տեղեկությունների հրապարակման քաղաքականությունների, դրանց կիրարկման, սպառողների տեսանկյունից ռիսկայնության ու իրավական համապատասխանության ուսումնասիրություններ:
- Հեռակա ստուգումների շրջանակներում, ֆինանսական կազմակերպությունների հեռուստագովազդներին զուգընթաց, ամսական պարբերականությամբ ստուգվել են նաև ռադիոգովազդները:
- 2018 թվականին ևս ՍԾՊևՖԿ կենտրոնն[3] արձագանքել է սպառողներից գրավոր և թեժ գծի միջոցով ստացված դիմումներին: Տարվա ընթացքում թեժ գծով ստացվել են 6904 զանգ և 762 դիմում:

[3] *Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոն:*

***Ֆինանսական իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով*** ՀՀ կենտրոնական բանկը 2018 թվականին ևս իրականացրել է ֆինանսական կրթման բազմաթիվ ծրագրեր.

- 2018 թ. ընթացքում 14 դպրոցներում շարունակվել է ***«Ֆինանսական կրթությունը դպրոցում»*** ծրագրի փորձարկումը, իսկ հունիսին ամփոփվել են արդյունքները՝ ուսուցիչների հետ հետադարձ կապի և աշակերտների շրջանում իրականացված ֆոկուս խմբերի հիման վրա: Փորձարկմանը մասնակցել են 46 ուսուցիչ և մոտ 1700 սովորող:

  Փաստաթղթերը հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարի 09.10.2018 թ. N1359-Ա/2 և 10.10.2018 թ. N1366-Ա/2 հրամաններով:

  Ծրագրի շրջանակում իրականացվել է ուսուցիչների վերապատրաստում ՀՀ բոլոր մարզերում՝ ընդգրկելով 346 դպրոց և 2532 ուսուցիչ: Ուսուցիչների վերապատրաստումները շարունակվելու են մինչև 2021 թվականը՝ ծրագիրը ներդնելով ՀՀ բոլոր դպրոցներում:
- Հաշվետու տարում շարունակվել է նաև ***«Ֆինանսական կրթությունը գյուղական համայնքներում»*** ծրագրի իրագործումը: Հայաստանի ամերիկյան համալսարանի մարզային ստորաբաժանումներում (Գյումրի, Վանաձոր, Եղեգնաձոր, Դիլիջան, Իջևան և Ստեփանակերտ) անձնական ֆինանսների արդյունավետ կառավարմանն ուղղված դասընթացներ են վարել ՀՀ ԿԲ սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնի վերապատրաստած մարզային դասընթացավարները:
- Հերթական անգամ իրականացվել է «Իմ ֆինանսների ամիս – 2018» ծրագիրը: Միջոցառումների նպատակը հասարակությանը պարզ և մատչելի ձևով գիտելիքների հաղորդումն է ֆինանսական աշխարհի, մասնավորապես՝ ֆինանսական ծառայությունների վերաբերյալ:
- Շարունակվել է ***«Սեմինարներ զինվորականների համար»*** ծրագրի իրականացումը, որի նպատակը զինվորներին անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ գործնական գիտելիքների տրամադրումն է: 2018 թ. ծրագրին մասնակցել է ռազմական բնագավառի 274 մասնագետ:
- 2018 թ. www.abcfinance.am կայքը ներկայացրել է ավելի քան 20 տպագիր և ավելի քան 70 էլեկտրոնային հոդվածներ բյուջեի կառավարման, վճարահաշվարկային համակարգի, վարկերի, ավանդների, ապահովագրության, արժեթղթերի և այլ թեմաներով:
- Մշակվել և տպագրվել են ֆինանսական կրթման բովանդակային նյութեր («Բյուջետիկ» և «Ֆինանսները այլ կերպ» սեղանի խաղերը)՝ անձնական ֆինանսների վերաբերյալ մատչելի ձևաչափով տեղեկատվություն փոխանցելու համար:
- 2018 թ. հանրությանը ներկայացվել է «Ֆինանսներ բոլորի համար» ամբողջությամբ վերափոխված կայքը (www.abcfinance.am), ինչպես նաև «Ֆինանսական տեղեկատու» համակարգը (www.fininfo.am), որը 2019 թվականից համալրված և հագեցված կլինի ֆունկցիոնալ նոր հնարավորություններով, կունենա առավել հարմարավետ դիզայն: Ֆեյսբուքյան abcfinance.am էջի օգտատերերի թիվը հասել է ավելի քան 40.000-ի:
- Համայնքային ֆինանսական հիմնախնդիրները բացահայտելու, ուսումնասիրելու, լուծման ուղիներ առաջարկելու նպատակով 2018 թվականին ևս Կենտրոնական բանկի և Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնի համագործակցությամբ իրականացվել է ***«Քաղաքացի»*** նախագիծը,

որն ընդգրկել է 30 դպրոցների առնվազն 30 հասարակագիտության ուսուցիչների, ինչպես նաև Երևանի միջին և ավագ դպրոցների շուրջ 600 աշակերտների:

- Տարբեր հեռուստաալիքներով հեռարձակվել են կենսաթոշակային բարեփոխումների, պետական սուբսիդավորմամբ տրամադրվող վարկերի, տարբեր ֆինանսական ծառայությունների վերաբերյալ կրթական և տեղեկատվական հոլովակներ:
- Շարունակվել է համագործակցությունը սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման ոլորտում միջազգային կառույցների՝ Եվրոպայի տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Ֆինանսական կրթման միջազգային ցանցի (INFE), Ֆինանսական ներգրավման միության (AFI), Եվրասիական տնտեսական ընկերակցության միջև:

# ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործառույթների բարելավման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 2018 թվականին շարունակել է անձնակազմի որակավորման բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

Մասնագիտական գիտելիքների կատարելագործման միջազգային լավագույն փորձին ծանոթանալու նպատակով ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործընթացներում ընդգրկված աշխատակիցները հաշվետու տարվա ընթացքում մասնակցել են մի շարք ներքին և արտաքին դասընթացների, աշխատանքային այցերի և կոնֆերանսների: Վերապատրաստված աշխատակիցները ներկայացրել են հաշվետվություն, մշակված հարցաթերթերի միջոցով գնահատել դասընթացների արդյունավետությունը, հանդես եկել արդյունավետ փորձի ներդրման առաջարկություններով և շահագրգիռ ստորաբաժանումների աշխատակիցներին փոխանցել վերապատրաստման արդյունքում ստացած գիտելիքները:

2018 թվականին իրականացվել է Հայաստանի ֆինանսական հատվածի գնահատման ծրագիր (FSAP) Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հետ համատեղ, որը ներկայացնում է ֆինանսական համակարգերի համակողմանի վերլուծություն: Ծրագրի արդյունքներով՝ Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր խորհուրդը Հայաստանի ֆինանսական համակարգը գնահատել է կայուն, իսկ բանկային վերահսկողության բազելյան հիմնարար սկզբունքներին համապատասխանությունը՝ բարձր՝ 97% (2012 թ.՝ 93%, իսկ 2005 թ.՝ 67%):

2018 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Հաշվետու տարում ՀՀ կենտրոնական բանկ է այցելել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) փորձագետների խումբը: ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է նաև ԱՄՀ/ՀԲ հոլանդա-բելգիական ենթախմբի գործադիր տնօրենի գլխավորած պատվիրակությանը, Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների պատվիրակությանը, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հակաահաբեկչական կոմիտեի գործադիր տնօրենության պատվիրակությանը և Չինաստանի բանկային և ապահովագրական ոլորտները կարգավորող հանձնաժողովի պատվիրակությանը:

Գործնական կապերը ընդլայնելու, երկրի մակրոտնտեսական վիճակին ծանոթանալու, ինչպես նաև ֆինանսական և բանկային տարբեր ոլորտների շուրջ բանակցություններ վարելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկ են այցելել Սևծովյան առևտրի և զարգացման բանկի նախագահի գլխավորած պատվիրակությունը, Ասիական զարգացման բանկի պատվիրակությունը, «Մուդիզ» (Moody's) և «Ֆիթչ Ռեյթինգս» (Fitch Ratings) միջազգային վարկանշային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Խորացվել և ամրապնդվել է սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման ոլորտում միջազգային կառույցների՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Ֆինանսական կրթման միջազգային ցանցի (INFE), Ֆինանսական ներգրավման միության (AFI), Եվրասիական տնտեսական ընկերակցության, ինչպես նաև Երեխաների և երիտասարդների ֆինանսների միջազգային կազմակերպության (Child & Youth Finance International) հետ համագործակցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնական բանկի աշխատակիցները շարունակել են մասնակցել ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների համար սահմանված միջազգային մասնագիտական որակավորման քննություններին:

ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ դրամի ներդրման 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում կազմակերպել է միջազգային համաժողով օտարերկրյա կենտրոնական/ազգային բանկերի կառավարիչների և միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ:

Կենտրոնական բանկն ակտիվ համագործակցել է բուհերի հետ. մասնակցել է ուսանողների հետ հանդիպումներին, անցկացրել գիտահետազոտական ու աշխատանքային փորձառություններ:


# ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

2018 թվականին ֆինանսական համակարգի մասնակիցները ավելացրել են ֆինանսական միջնորդության ծավալները: Տարվա ընթացքում ֆինանսական համակարգի ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 4.0 և 4.1 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 97.6% և 53.9%:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակից է մնում բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 85.1%-ը:

**Գրաֆիկ 1**

***Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## ԲԱՆԿԵՐ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ


***Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը***

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 17 բանկ:

Տարվա ընթացքում բանկերը բարձր ակտիվություն են ցուցաբերել վարկային և ավանդային շուկաներում: Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ և տնտեսությանը տրամադրված վարկեր/ՀՆԱ ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 4.9 և 3.8 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 83.1% և 48.9%: Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներ/ՀՆԱ ցուցանիշն ավելացել է 1.3 տոկոսային կետով և կազմել է 45.5%:

**Գրաֆիկ 2**

***Բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշները***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*


*Աղյուսակ 2. Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը*

| | 2016 | 2017 | 2018 |
|---|---|---|---|
| 100,000 չափահաս բնակչի հաշվով մասնաճյուղերի քանակ | 22.3 | 22.6 | 23.3 |
| 100,000 չափահաս բնակչի հաշվով ԱԳՄ-ների քանակ | 59.9 | 62.5 | 65.1 |

Բանկային համակարգի աշխատակիցների թիվը (ներառյալ՝ սպասարկող անձնակազմը) ավելացել է 4.5%-ով և տարեվերջին կազմել 11.772: Ընդհանուր թվում ղեկավար անձնակազմի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.3 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 15.8%:

*Գրաֆիկ 3*

*Բանկերի մասնաճյուղերի և աշխատակիցների թիվը*




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

### *Կենտրոնացվածությունը ՀՀ բանկային համակարգում*

2018 թվականին արձանագրվել է Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակցի աճ գրեթե բոլոր հիմնական հաշվեկշռային ցուցանիշների մասով: Այդուհանդերձ, կենտրոնացվածության գործակիցները հիմնականում պահպանվել են 600-ից 1000-ի միջակայքում՝ փաստելով բանկային համակարգի թույլ կենտրոնացվածության մասին:

*Աղյուսակ 3. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը*

| Ցուցանիշներ | 31.12.16 | 31.12.17 | 31.12.18 |
|---|---|---|---|
| Ընդհանուր ակտիվներ | 859 | 868 | 887 |
| Ընդհանուր պարտավորություններ | 953 | 938 | 947 |
| Ընդհանուր կապիտալ | 580 | 655 | 675 |
| Տնտեսությանը տրամադրված վարկեր | 1014 | 990 | 989 |
| Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ | 825 | 937 | 900 |
| Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ՝ բանկային հաշիվներ) | 1222 | 972 | 1038 |

Խոշորագույն 4 և 10 բանկերի տեսակարար կշիռների հիմնական ցուցանիշները գրեթե չեն փոփոխվել:

*Աղյուսակ 4. Բանկային հատվածի կենտրոնացվածության մակարդակը*

| Ցուցանիշներ | 31.12.16 | 31.12.17 | 31.12.18 |
|---|---|---|---|
| ***Ընդհանուր ակտիվներ*** | | | |
| ԿԳ 4 (խոշորագույն չորս բանկի տեսակարար կշիռը համակարգում) | 48% | 49% | 50% |
| ԿԳ 10 (խոշորագույն տասը բանկի տեսակարար կշիռը համակարգում) | 79% | 80% | 81% |
| ***Ընդհանուր պարտավորություններ*** | | | |
| ԿԳ 4 | 51% | 51% | 52% |
| ԿԳ 10 | 83% | 83% | 83% |
| ***Ընդհանուր կապիտալ*** | | | |
| ԿԳ 4 | 31% | 35% | 37% |
| ԿԳ 10 | 64% | 69% | 69% |
| ***Ցնտեսությանը տրամադրված վարկեր*** | | | |
| ԿԳ 4 | 52% | 53% | 53% |
| ԿԳ 10 | 84% | 85% | 85% |
| ***Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ*** | | | |
| ԿԳ 4 | 47% | 51% | 49% |
| ԿԳ 10 | 80% | 83% | 83% |
| ***Ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհատմամբ ցպահանջ պարտավորություններ (ներառյալ՝ բանկային հաշիվներ)*** | | | |
| ԿԳ 4 | 55% | 51% | 54% |
| ԿԳ 10 | 89% | 87% | 87% |

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼԸ

### *Բանկային համակարգի կապիտալի աճի միտումները*

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 9.2%-ով և կազմել 749 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճը պայմանավորվել է կանոնադրական կապիտալի ավելացմամբ և զուտ շահույթի աճով: Տարվա ընթացքում 4 բանկ համալրել է կանոնադրական կապիտալը ընդհանուր 41.4 մլրդ դրամի չափով:

Բանկային համակարգի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտ մասնակիցների փայամասնակցության տեսակարար

կշիռը տարվա ընթացքում ավելացել է 0.3 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 62.1%:

Հաշվետու տարում պահպանվել են կապիտալի նկատմամբ ակտիվների առաջանցիկ աճի տեմպերը, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.7 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 15.0%:


### *Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը*

2018 թվականին բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նվազել է 1.0 տոկոսային կետով և կազմել 17.7% (պահանջվող նվազագույն սահմանաչափը՝ 12%): Ըստ առանձին բանկերի՝ կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշները պահպանվել են նվազագույն սահմանաչափից բարձր, և որևէ բանկում չեն արձանագրվել կապիտալի համարժեքության խախտումներ:

Տարվա ընթացքում առևտրային բանկերը շարունակել են ներգրաված միջոցները տեղաբաշխել հիմնականում վարկային ներդրումներում: Ըստ այդմ՝ վճարունակության ապահովման առումով, վարկային ռիսկը շարունակում է դիտարկվել որպես կարևորագույն ռիսկ. վերջինիս բաժին է ընկնում առևտրային բանկերի ռիսկով կշռված ակտիվների 86.7%-ը (նախորդ տարի՝ 85.8%-ը): Շուկայական և գործառնական ռիսկերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 10.4% և 2.9% (31.12.2017 թ. դրությամբ՝ 11.1% և 3.1%):

**Գրաֆիկ 4**

***Առևտրային բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը և կապիտալի համարժեքության շարժը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### *Բանկային համակարգի ներգրաված միջոցները*

2018 թվականին բանկային համակարգի պարտավորությունները ավելացել են 15.2%-ով և տարեվերջին կազմել 4 տրլն 238 մլրդ դրամ:


Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային պարտավորությունները ավելացել են 20.4%-ով, իսկ արտարժութային պարտավորությունները՝ 11.7%-ով: Արդյունքում՝ արտարժութային պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 1.8 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 58.2%:

Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրաված ցպահանջ և ժամկետային միջոցների մնացորդը ավելացել է 10.7%-ով և տարեվերջին կազմել է 2 տրլն 728 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց ներգրաված միջոցները ավելացել են 12.3%-ով, իսկ ֆիզիկական անձանց ներգրաված միջոցները՝ 9.8%-ով և տարեվերջին կազմել համապատասխանաբար 1 տրլն 23 մլրդ դրամ և 1 տրլն 705 մլրդ դրամ:

Ըստ արժութային կառուցվածքի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրաված ցպահանջ և ժամկետային դրամային միջոցների մնացորդն ավելացել է 10.6%-ով, իսկ արտարժութային միջոցների մնացորդը՝ 10.8%-ով: Արդյունքում արտարժութային միջոցների տեսակարար կշիռը ընդհանուրում գրեթե չի փոփոխվել. կազմել է 62.8%:

**Գրաֆիկ 5**


***Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ միջոցների մնացորդը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 6**

***Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային միջոցների մնացորդը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## *Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը*

31.12.2018 թ. դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 95.7% (նախորդ տարի՝ 96.1%): Եթե բացառենք ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունները, ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 71.0% (նախորդ տարի՝ 73.6%):

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքում զգալիորեն նվազել է իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրաված ժամկետային միջոցների տեսակարար կշիռը (4.6 տոկոսային կետով), և ավելացել են իրավաբանական ու ֆիզիկական անձանցից ներգրաված ցպահանջ միջոցների (2.0 տոկոսային կետով), ԿԲ և այլ բանկերի նկատմամբ պարտավորությունների (1.4 տոկոսային կետով) և թողարկված արժեթղթերի (1.5 տոկոսային կետով) տեսակարար կշիռները:

Ըստ մարման ժամկետայնության՝ 31.12.2018 թ. դրությամբ ներգրաված միջոցների 26%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ), 47%-ը՝ մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ, 27%-ը՝ 1 տարուց ավելի մարման ժամկետայնությամբ (31.12.2017 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 23%-ը, 49%-ը և 28%-ը):

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

### *Բանկային համակարգի տեղաբաշխված միջոցների աճի միտումները*

2018 թվականին բանկային համակարգի ընդհանուր ակտիվները ավելացել են 14.3%-ով և տարեվերջին կազմել 4 տրլն 987 մլրդ դրամ: Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը, ԿԲ-ում թղթակցային հաշիվները և պետական արժեթղթերում ներդրումները:

Տնտեսությանը տրամադրված վարկերն աճել են 16.5%-ով և կազմել 2 տրլն 932 մլրդ դրամ: Իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկերն աճել են համապատասխանաբար 10.6%-ով և 26.1%-ով՝ տարեվերջին կազմելով համապատասխանաբար 1 տրլն 719 մլրդ դրամ և 1 տրլն 213 մլրդ դրամ:


***Աղյուսակ 5. Ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների կառուցվածքն ըստ երկրների***

| | 31.12.17 | 31.12.18 | Փոփոխություն |
|---|---|---|---|
| Եվրոմիություն | 28.7% | 43.2% | +14.5% |
| Գերմանիա | 6.8% | 9.3% | +2.5% |
| Ավստրիա | 12.6% | 23.3% | +10.7% |
| Ֆրանսիա | 0.3% | 6.5% | +6.2% |
| ԵՄ անդամ այլ երկրներ | 1.1% | 4.1% | +3.0% |
| ԱՄՆ | 51.6% | 22.5% | -29.1% |
| Ռուսաստան | 16.0% | 26.4% | +10.4% |
| Այլ երկրներ | 3.7% | 7.9% | +4.2% |

ԿԲ-ում թղթակցային հաշիվներն ու այլ պահանջները աճել են 9.8%-ով և կազմել 609 մլրդ դրամ: Բանկերում թղթակցային

*Գրաֆիկ 7*


***Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*Գրաֆիկ 8*

***Բանկային համակարգի ակտիվների կազմը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

հաշիվները ավելացել են 29.2%-ով և կազմել 102 մլրդ դրամ: Թղթակցային հաշիվների 99.7%-ը տեղաբաշխված է եղել ոչ ռեզիդենտ բանկերում:

Պետական արժեթղթերում ներդրումներն աճել են 12.6%-ով և կազմել 550 մլրդ դրամ:

### *Բանկային համակարգի տեղաբաշխված միջոցների կառուցվածքը*

Հաշվետու տարում ակտիվներում եկամտաբեր ակտիվների կշիռն ավելացել է 0.6 տոկոսային կետով և կազմել 78.5%: Առանց ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվների՝ մնացած եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ավելացել է 0.1 տոկոսային կետով և կազմել է 77.3%:

Տեղաբաշխված միջոցների 18%-ը ցպահանջ է, 32%-ը՝ մինչև 1 տարի մարման ժամկետով և 50%-ը՝ 1 տարուց ավելի մարման ժամկետով (31.12.2017 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 17%-ը, 34%-ը և 49%-ը):


### *Բանկային համակարգի վարկային ներդրումները (վարկեր, լիզինգ, ֆակտորինգ և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված վարկեր ու ավանդներ)*

2018 թվականին բանկային համակարգի վարկային ներդրումներ[4] ավելացել են 15.3%-ով և կազմել 3 տրլն 275 մլրդ դրամ: Դրամային վարկային ներդրումներն ավելացել են 30.4%-ով և կազմել 1 տրլն 434 մլրդ դրամ, իսկ արտարժութային վարկային ներդրումներն ավելացել են 5.8%-ով և կազմել 1 տրլն 840 մլրդ դրամ: Արդյունքում՝ արտարժութային վարկային ներդրումների տեսակարար կշիռն ընդհանուրում նվազել է 5.1 տոկոսային կետով և կազմել 56.2%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն աճել են 20.5%-ով և կազմել 255 մլրդ դրամ, ռեզիդենտներին

*Գրաֆիկ 9*


***Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*Գրաֆիկ 10*

***Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*[4] Տնտեսությանը տրամադրված վարկերից տարբերվում են ավանդների, ֆակտորինգի, լիզինգի, արժութային սվոպի, ռեպո համաձայնագրերի և ֆինանսական կազմակերպությունների տեղաբաշխված վարկերի ծավալներով:*


տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 14.9%-ով և կազմել 3 տրլն 19 մլրդ դրամ: Արդյունքում՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների տեսակարար կշիռն աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 7.8%:

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներում տարեվերջին մեծ տեսակարար կշիռ են ունեցել սպառողական, արդյունաբերության և առևտրի ոլորտներին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 23.3%, 17.5% և 14.9%:

Բանկային համակարգի կողմից տնտեսության ճյուղերի վարկավորման Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցն աճել է 8 կետով և կազմել 1088: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, կազմել է 1760, ինչը վկայում է որոշ բանկերում վարկային ներդրումների ճյուղային որոշակի կենտրոնացվածության մակարդակի մասին: Այդուհանդերձ, այդ բանկերում վարկային պորտֆելների ճյուղային բարձր կենտրոնացվածությունը սպառողական վարկերի խոշոր մասնաբաժնի արդյունք է, և, ըստ վարկերի ծավալների, նույն բանկերի վարկային պորտֆելները բազմազանեցված են:

**Գրաֆիկ 11**

***Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


### *Բանկային համակարգի եկամտաբերությունը*

2018 թվականին բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 38.6 մլրդ դրամ[5]: Տարվա ընթացքում շահույթով է աշխատել 15, իսկ վնասով՝ 2 բանկ:

Բանկային համակարգի՝ ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 0.1 և 0.7 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար 0.9% և 5.3%:

**Գրաֆիկ 12**

***Եկամտաբերության բնութագրիչ ցուցանիշները***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*


*[5] Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն՝ բանկային համակարգի շահույթը 2018 թվականին կազմել է 59.1 մլրդ դրամ: ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՍ հիմնական տարբերությունը ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստներին հատկացումների մեծությունն է:*

Կապիտալի շահութաբերությունը նվազել է ակտիվների շահութաբերության նվազման հաշվին, իսկ լևերիջը գրեթե չի փոփոխվել: Ակտիվների շահութաբերությունը նվազել է հիմնականում վարկերի և ավանդների տոկոսադրույքների սպրեդի նվազման և ոչ տոկոսային ծախսերի աճի արդյունքում: Ակտիվների շահութաբերության վրա դրական են ազդել ոչ տոկոսային եկամուտների ավելացումը և վարկային պորտֆելի որակի բարելավումը:

Ըստ ակտիվների շահութաբերության (RoA) քվարտիլային վերլուծության արդյունքների համաձայն՝ նախորդ տարվա համեմատությամբ աճել է բանկերի միջև շահութաբերության ցրվածությունը: Ըստ ակտիվների շահութաբերության միջքվարտիլային միջակայքն աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 1.5%: Միջքվարտիլային միջակայքը հիմնականում աճել է 3-րդ քվարտիլի ու մեդիանի տարբերության 0.2 տոկոսային կետով և 1-ին քվարտիլի ու մեդիանի 0.1 տոկոսային կետով աճի հաշվին: Արդյունքում՝ 3-րդ քվարտիլի ու մեդիանի տարբերությունը և մեդիանի ու 1-ին քվարտիլի տարբերությունը կազմել են համապատասխանաբար 1.0% և 0.5 % (նախորդ տարի՝ 0.8% և 0.4%):

**Գրաֆիկ 13**


***Բանկային համակարգի՝ ըստ ակտիվների շահութաբերության մակարդակը (RoA)***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 14**

***Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

### *Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը*

2018 թվականին բանկային համակարգի գործառնական եկամուտներն աճել են 6.2%-ով, գործառնական ծախսերը՝ 6.2%-ով: Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտներն ավելացել են 3.3%-ով, ոչ տոկոսային եկամուտները՝ 16%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը նվազել է 62.1%-ով: Համախառն ծախսերի կազմում տոկոսային ծախսերը նվազել են 2.0%-ով, ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումները՝ 1.3 անգամ, իսկ ոչ տոկոսային ծախսերն աճել են 19.0%-ով:

Բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճը հիմնականում պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված

վարկերից ստացած եկամուտների աճով, ընդ որում՝ վերջին-ներիս տեսակարար կշիռն ընդհանուր տոկոսային եկամուտնե-րում կազմել է 81.9% (նախորդ տարի՝ 82.2%):

Ոչ տոկոսային եկամուտների կազմում հիմնականում աճել են միջնորդավճարներից և ՀՀ պետական գանձապետական արժե-թղթերից ստացվող եկամուտները: Ոչ տոկոսային եկամուտների կազմում խոշոր տեսակարար կշիռ ունեն միջնորդավճարներից ստացված եկամուտները, արտարժույթով գործարքներից ստաց-ված զուտ եկամուտները և տույժերն ու տուգանքները՝ համապա-տասխանաբար 52.6%, 15.8% և 12.3% (նախորդ տարի՝ 47.2%, 19.7% և 18.6%):

Տոկոսային ծախսերը նվազել են հատկապես ժամկետային ավանդների և առևտրային բանկերից ու այլ ֆինանսական կազ-մակերպություններից միջոցների դիմաց տոկոսավճարների կրճատման հաշվին: Տոկոսային ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն ժամկետային ավանդների և առևտրային բանկերից ու այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված մի-ջոցների դիմաց վճարները՝ համապատասխանաբար 54.8% և 21.0% (նախորդ տարի՝ 57.7 % և 21.5%):

Ոչ տոկոսային ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն աշ-խատավարձի գծով ծախսերը՝ 43.1% (նախորդ տարի՝ 46.2%):

## ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ


2018 թվականին բանկային համակարգի ռիսկերը պահպան-վել են կառավարելի շրջանակներում, և ֆինանսական կայու-նությունը վտանգող ռիսկեր չեն դիտարկվել: Տարվա ընթացքում առևտրային բանկերում ընդհանուր կապիտալի համարժեքու-թյան և իրացվելիության նորմատիվային ցուցանիշները գտնվել են պահանջվող նվազագույն սահմանաչափից բարձր մակար-դակում:

*Աղյուսակ 6. Առևտրային բանկերի նորմատիվային ցուցանիշները*

| Նորմատիվային ցուցանիշ | 31.12.2017 | 31.12.2018 | Փոփոխություն | Նորմատիվային սահմանաչափ |
|---|---|---|---|---|
| Ընդհանուր նորմատիվային կապիտալի համարժեքություն | 18.6% | 17.7% | -0.90% | ≥ 12% |
| Ընդհանուր իրացվելիություն | 32.1% | 27.3% | -4.80% | ≥ 15% |
| Ընթացիկ իրացվելիություն | 141.7% | 116.6% | -25.10% | ≥ 60% |
| Մեկ խոշոր փոխառուի գծով ռիսկ | 18.7% | 19.0% | 0.30% | ≤ 20% |
| Բոլոր խոշոր փոխառուների գծով ռիսկ | 141.7% | 150.4% | 8.70% | ≤ 500% |
| Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկ | 3.3% | 3.2% | -0.10% | ≤ 5% |
| Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկ | 9.2% | 9.2% | -0.0% | ≤ 20% |

*Գրաֆիկ 15*

*Առևտրային բանկերի՝ ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը*




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*


## *Վարկային ռիսկ*

ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկը շարունակում է դիտարկվել որպես կարևորագույն ռիսկ: Առևտրային բանկերի՝ ռիսկով կշռված ակտիվներում վարկային ռիսկի մասնաբաժինը կազմել է 86.7% (նախորդ տարի՝ 85.8%): Այս համատեքստում, բանկային համակարգի վճարունակության առումով, վարկային ռիսկի պատշաճ կառավարումը խիստ կարևորվում է բանկային համակարգի կայունության ապահովման տեսանկյունից:

Տարվա ընթացքում բարելավվել է բանկային համակարգում վարկային պորտֆելի վերադարձելիությունը: Ըստ վարկային ներդրումների ռիսկայնության՝ չաշխատող վարկերը և դեբիտորական պարտքերը հաշվետու տարում նվազել են 1.5%-ով և կազմել 148.9 մլրդ դրամ, իսկ ստանդարտ վարկերը և դեբիտորական պարտքերն ավելացել են 16.6%-ով և կազմել 3 տրլն 267 մլրդ դրամ: Արդյունքում՝ չաշխատող վարկերի և դեբիտորական

*Գրաֆիկ 16*

*Վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքն ըստ ռիսկի դասերի*




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

պարտքերի (հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի վարկային ռիսկի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր) տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում նվազել է 0.8 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 4.4%: Ըստ ռիսկայնության դասերի՝ վարկերում և դեբիտորական պարտքերում հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 1.4%, 1.2% և 1.7% (31.12.2017 թ. դրությամբ՝ 1.4%, 2.0%, 1.7%):

Ըստ տնտեսության ճյուղերի՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է սպառողական, գյուղատնտեսության, հանրային սննդի ու այլ սպասարկման ոլորտի վարկերում՝ համապատասխանաբար 7.0%, 6.6% և 5.4%:


Ըստ ռեզիդենտության՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի 97%-ը տարեվերջին բաժին է ընկել ռեզիդենտներին, իսկ 3.0%-ը՝ ոչ ռեզիդենտներին (31.12.2017 թ. դրությամբ՝ 98.3%-ը և 1.7%-ը):

Զուտ չաշխատող վարկերի ու դեբիտորական պարտքերի և նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերակցության ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 3.1 տոկոսային կետով և կազմել 13.9%[7]:

Զուտ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի նույնիսկ ամբողջական դուրսգրման սցենարի դեպքում (անտեսելով գրավադրված գույքի արժեքը) բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը կլինի պահանջվող նվազագույն սահմանաչափից բարձր՝ 15.6%[8]:

**Գրաֆիկ 17**

***Ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկային պորտֆելի որակի փոփոխությունը 2017-2018 թթ.[6]***




Ճյուղի չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր չաշխատող վարկերում (Contribution)

*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*[6] Գրաֆիկում շրջանակների տրամագիծը ուղիղ համեմատական է բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելում տնտեսության համապատասխան ճյուղի վարկային ներդրումների տեսակարար կշռին: Շրջանակների միջև սլաքի ուղղությունը և մեծությունը ներկայացնում են 2017 - 2018 թթ. տվյալ ճյուղի չաշխատող վարկերի տեսակարար կշռի փոփոխությունը:*

*[7] Զուտ չաշխատող վարկերը և դեբիտորական պարտքերը հաշվարկվել են որպես չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային մեծության և ակտիվների հնարավոր կորուստների պահուստի մեծության տարբերություն:*

*[8] Ծածկույթ չունեցող չաշխատող վարկերը և դեբիտորական պարտքերը սահմանվում են որպես չաշխատող վարկերի ու դեբիտորական պարտքերի և ձևավորված հնարավոր կորուստների պահուստի տարբերություն:*


*Աղյուսակ 7. Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ [9]*

| 31.12.2018 թ. | Դիտարկվող սթրես-սցենարներ | | |
|---|---|---|---|
| | Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի վարկերի | Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի | Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի |
| Բանկային համակարգի վնասի մեծությունը | 24.7 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 3.4%-ը | 18.2 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 2.5%-ը | 89.8 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 12.4%-ը |
| Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի դրսևորման դեպքում | 17.2% | 17.3% | 15.8% |

Վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստերի[11] արդյունքները տարեսկզբի նույն սթրես-թեստերի արդյունքների համեմատությամբ որոշակիորեն վատացել են՝ պայմանավորված բանկերի կողմից վարկային պորտֆելի ընդլայնման պայմաններում կապիտալի համարժեքության նվազմամբ:

*Գրաֆիկ 18*

*Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստները [10]*




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

### *Արտարժութային ռիսկ*

2018 թվականի ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին տարեկան փոխարժեքը արժեզրկվել է 0.08%-ով, իսկ տարեսկզբի նկատմամբ արժևորվել է 0.07%-ով: ՀՀ դրամի՝ արտարժույթների նկատմամբ փոխարժեքի տատանումների հետևանքով արտարժույթի վերագնահատման արդյունքում բանկային համակարգն ունեցել է 1.1 մլրդ դրամի զուտ վնաս,

*[9] Հաշվետվությունում ներկայացված այս և հաջորդ սթրես-սցենարները չեն կանխատեսում այս կամ այն ռիսկերի դրսևորումը, այլ նպատակ ունեն բացահայտելու ֆինանսական համակարգի թույլ կողմերը, գնահատելու վերջինիս՝ ռիսկերը չեզոքացնելու ունակությունը:*

*[10] Անհուսալի վարկային ռիսկի դաս ունեցող ակտիվները և դրանց գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստը չեն ներկայացվել գրաֆիկում: Անհուսալի ճանաչված ակտիվների գծով բանկերը ձևավորում են 100%-ի չափով հնարավոր կորուստների պահուստ և դուրսգրում հաշվեկշռից:*

*[11] Սթրես-սցենարները կառուցված են բանկերի վարկերի անփոփոխ ծավալների և գրավադրված գույքի անտեսման ենթադրությունների պայմաններում (ըստ որոնց՝ վարկերն անհուսալի դասակարգվելու սցենարում դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի օտարման հնարավորությունը չի դիտարկվում):*

իսկ արտարժույթի առուվաճառքի գործարքներից և ածանցյալ գործիքներով գործարքներից՝ 21.8 մլրդ դրամի զուտ եկամուտ: Արտարժույթի ռիսկի գնահատման Value-at risk մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում տասնօրյա հնարավոր վնասը 95% հավանականությամբ չի գերազանցի 200 մլն դրամը:

*Աղյուսակ 8. Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ*

| 31.12.2018 թ. | Դիտարկվող սթրես-սցենարներ | | |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 5%-ով արժևորման (արժեզրկման) դեպքում օգուտ (վնաս) | Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 5%-ով արժևորման (արժեզրկման) դեպքում օգուտ (վնաս) | Տասնօրյա հնարավոր առավելագույն վնասը՝ գնահատված VaR մոդելով |
| Բանկային համակարգի օգուտը (վնասը) արտարժույթի վերագնահատման արդյունքում | 1,091 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.15%-ը (1,091 մլն դրամ) | 215 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.03%-ը (215 մլն դրամ) | 200 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.03%-ը |


Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-թեստերում[12] դիտարկվող հնարավոր վատթարագույն սթրեսային սցենարների դրսևորման դեպքում արտարժութային բաց դիրքի հետևանքով բանկային համակարգի հնարավոր կորուստները նշանակալի չեն, իսկ ֆինանսական կայունության խոցելիության վրա դրանց ազդեցությունը թույլ է:

### *Իրացվելիության ռիսկ*

Բանկային համակարգի իրացվելիությունը շարունակում է պահպանվել բարձր մակարդակում: Ըստ առանձին բանկերի՝ տարվա ընթացքում ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները գերազանցել են պահանջվող նորմատիվային նվազագույն սահմանաչափերը: 31.12.2018 թ.

*Գրաֆիկ 19*

*Առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշների շարժը*




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

[12] *Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (չի համարվում սթրես-սցենար, քանզի VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հիմքում 31.12.2018 թ. դրությամբ բանկերի արտարժութային դիրքերն են:*

դրությամբ բանկային համակարգի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 27.3% և 116.6% (նվազագույն սահմանաչափերը՝ 15% և 60%):

Բանկային համակարգի պարտավորությունների կենտրոնացվածության տեսանկյունից՝ խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 12.8%[13]:

Վարկային պորտֆելի ֆինանսավորման ավանդային աղբյուրների կայունության տեսանկյունից՝ վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշն աճել է 5.4 տոկոսային կետով և կազմել 107.5%[14]:

*Աղյուսակ 9. Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ*

| 31.12.2018 թ. | Դիտարկվող սթրես-սցենարներ | | |
|---|---|---|---|
| | Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում | Ցպահանջ միջոցների 25%-ի մարում | Ցպահանջ միջոցների և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում |
| Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ | 21.7% | 22.8% | 16.4% |
| Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ | 85.9% | 122.0% | 81.2% |

2018 թվականի սկզբին իրականացված իրացվելիության սթրես-թեստի արդյունքների համեմատությամբ տարեվերջին սթրես-թեստի արդյունքները վատացել են՝ պայմանավորված

*Գրաֆիկ 20*

*Առևտրային բանկերի վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշի շարժը*




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*[13] Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:*

*[14] Վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշի հաշվարկում վարկերը ներառում են տնտեսության իրական հատվածին տրամադրված վարկերը, իսկ ավանդները՝ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված միջոցները:*

բանկային համակարգում բարձր իրացվելի ակտիվների աճի տեմպի դանդաղմամբ: Այդուհանդերձ, դիտարկվող վատագույն սթրեսային սցենարներում բոլոր բանկերում բարձր իրացվելի ակտիվները բավարար են դրամական միջոցների սիմուլացվող արտահոսքը ծածկելու համար: Այս առումով, ֆինանսական կայունությունը խոցող իրացվելիության ռիսկի դրսևորման հավանականությունը գնահատվում է բավականին ցածր:

### *Գնային ռիսկ*

Գնային ռիսկը ՀՀ բանկային համակարգում շարունակում է գնահատվել բավականին ցածր: Տարեսկզբի համեմատությամբ բանկային համակարգի շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում նվազել է 1.7 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 8.0%:

Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է 3.1 մլրդ դրամի զուտ եկամուտ կամ ընդհանուր կապիտալի 0.4%-ը:


ՀՀ բանկերը հիպոտեկային վարկեր տրամադրում են հիմնականում անշարժ գույքի շուկայական արժեքի (LTV) 60%-80%-ից ոչ ավելի և կիրառում են վարկունակության գնահատման խիստ մոտեցումներ: Այս համատեքստում անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակներում:

### *Տոկոսադրույքի ռիսկ*

ԿԲ-ի կողմից մեղմ դրամավարկային պայմանների պահպանումը, բանկային համակարգում բարձր մրցակցությունը և բանկային համակարգի իրացվելիությունը շարունակել են նպաստել շուկայական տոկոսադրույքների նվազմանը: Ընդ որում, հաշվետու տարում նույնպես պահպանվել է դրամային վարկերի տոկոսադրույքների առաջանցիկ նվազման միտումը:

*Գրաֆիկ 21*

***Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքները***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

2018 թվականին բանկային համակարգում տոկոսադրույքի ռիսկը պահպանվել է ցածր մակարդակում: Բանկերը շարունակել են կիրառել ըստ մարման ժամկետային խմբերի խիստ սահմանաչափեր, և ակտիվների ու պարտավորությունների դյուրացիայի ճեղքվածքը տատանվել է 6-12 ամսվա միջակայքում: Այս տեսանկյունից շուկայական տոկոսադրույքների տատանումների դեպքում անմիջական կորուստների ազդեցությունը բանկերի ֆինանսական վիճակի վրա գնահատվում է թույլ:

*Աղյուսակ 10. Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ*

| 31.12.2018 թ. | Դիտարկվող սթրես-սցենարներ | |
|---|---|---|
| | **Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով նվազման (աճի) ազդեցությունը կապիտալի տնտեսական արժեքի վրա՝ գնահատված *դյուրացիայի մեթոդով*** | **Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով նվազման (աճի) դեպքում առաջիկա երեք ամսվա զուտ տոկոսային եկամտի՝ սպասվող եկամտից շեղում՝ գնահատված *տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մեթոդով*** |
| Բանկային համակարգի օգուտ/վնաս | -29.3 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 4.1%-ը (29.3 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 4.1%-ը) | -848 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.1%-ը (848 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.1%-ը) |

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման վատատեսական սթրես-թեստի արդյունքների համաձայն՝ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունների դեպքում առևտրային բանկերի հնարավոր կորուստները ընդհանուր կապիտալի նկատմամբ տատանվում են միջինը 4.0%-ի շրջանակում: Այս համատեքստում բանկային համակարգում շուկայական տոկոսադրույքների տատանումների հետևանքով հնարավոր կորուստները նշանակալի չեն, և դրանց ազդեցությունը ֆինանսական կայունության վրա գնահատվում է բավականին թույլ:

# ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### *ՀՀ տարածքում գործող վարկային ընկերություններ*

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են երեսունութ վարկային կազմակերպություններ, որոնցից երեքը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն, երեսուներկուսը՝ ունիվերսալ և երկուսը՝ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություններ: Տարվա ընթացքում վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի քանակն ավելացել է 6-ով և տարեվերջին կազմել 211:

### *Կենտրոնացվածությունը ՀՀ վարկային կազմակերպություններում*

*Աղյուսակ 11. Վարկային կազմակերպությունների կենտրոնացվածության մակարդակը (%)*

| Նորմատիվային ցուցանիշ | 31.12.17 | 31.12.18 |
|---|---|---|
| **Ընդհանուր ակտիվներ** | | |
| ԿԳ 4 | 56.9 | 50.2 |
| ԿԳ 10 | 80.0 | 75.8 |
| **Ընդհանուր պարտավորություններ** | | |
| ԿԳ 4 | 45.7 | 40.8 |
| ԿԳ 10 | 76.2 | 73.1 |
| **Ընդհանուր կապիտալ** | | |
| ԿԳ 4 | 78.5 | 72.2 |
| ԿԳ 10 | 91.4 | 89.1 |
| **Ֆինանսական տրամադրված վարկերը (ներառյալ՝ լիզինգ, ֆակտորինգ)** | | |
| ԿԳ 4 | 50.9 | 42.0 |
| ԿԳ 10 | 77.9 | 73.0 |


Վարկային կազմակերպությունների միջև կենտրոնացվածությունը նվազել է գրեթե բոլոր հաշվեկշռային ցուցանիշների մասով՝ բացառությամբ ընդհանուր կապիտալի:

Տարբեր ամփոփ ցուցանիշների Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը հիմնականում տատանվում է 700-ից 1000-ի միջակայքում (բացառությամբ ընդհանուր կապիտալի)՝ փաստելով թույլ կենտրոնացվածության մասին:

Հաշվետու տարում խոշոր և մանր վարկային կազմակերպությունների միջև բոլոր ցուցանիշների գծով արձանագրվել է բևեռացվածության նվազում:

*Գրաֆիկ 22*

***Վարկային կազմակերպությունների պարտավորությունների կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


### *Վարկային կազմակերպությունների կապիտալը*

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 14.4%-ով և կազմել 294.4 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է կանոնադրական հիմնադրամի աճով:

Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը հաշվետու տարում ավելացել է 1.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 8.1%: Ոչ ռեզիդենտների փայամասնակցությամբ 15 վարկային կազմակերպություններից 9-ը ամբողջությամբ օտարերկրյա մասնակցությամբ ընկերություններ են, որոնց տեսակարար կշիռը վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում կազմել է 15.0% (31.12.2017 թ. դրությամբ՝ 12.1%):

*Գրաֆիկ 23*

***Վարկային կազմակերպությունների ակտիվների կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

### *Վարկային կազմակերպությունների պարտավորությունները*

Վարկային կազմակերպությունների պարտավորություններն ավելացել են 20.3%-ով. կազմել են 261.5 մլրդ դրամ:

Իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորություններն ավելացել են 47.2%-ով. կազմել են 50.0 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորություններն ավելացել են 4.3%-ով և կազմել 26.7 մլրդ դրամ:

### *Վարկային կազմակերպությունների ակտիվները*

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները տարվա ընթացքում ավելացել են 17.1%-ով և տարեվերջին կազմել 556.0 մլրդ դրամ: Գործող կազմակերպություններից 22-ում տարեվերջին արձանագրվել է ակտիվների աճ:


Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են բանկային հաշիվները՝ 88.2%-ով և կազմել 57.7 մլրդ դրամ, պահանջները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 8.1%-ով և կազմել 149.2 մլրդ դրամ, արժեթղթերը (պետական և այլ)՝ 26.8%-ով և կազմել 46.2 մլրդ դրամ, տնտեսությանը տրամադրված վարկերը՝ 19.1%-ով և կազմել 212.0 մլրդ դրամ:

Վարկավորման աճ արձանագրվել է տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում՝ բացառությամբ շինարարության, արդյունաբերության և առևտրի ոլորտների:

Վարկային կազմակերպությունների չաշխատող (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի) ակտիվների տեսակարար կշիռը տարվա ընթացքում ավելացել է 1.8 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 5.0%: Չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է սպառողական, հանրային սննդի և սպասարկման, առևտրի և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրված վարկերում՝ համապատասխանաբար 18.2%, 7.8%, 7.2% և 6.9%:

**Գրաֆիկ 24**

***Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

### *Վարկային կազմակերպությունների ֆինանսական արդյունքները*

Վարկային կազմակերպությունների վերահսկողական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված զուտ շահույթի մեծությունը 2018 թվականին կազմել է 56.6 մլրդ դրամ[15], ընդ որում՝ շահույթով են աշխատել 32, իսկ վնասով՝ 6 վարկային կազմակերպություններ: Շահույթով աշխատած վարկային կազմակերպությունների ընդհանուր զուտ շահույթի մեծությունը 56.9 մլրդ դրամ է:

Վարկային կազմակերպությունների հաշվետու տարվա շահութաբերությունն ըստ ակտիվների (RoA) 10.6% է, իսկ ըստ կապիտալի (RoE)՝ 22.6%:


2018 թվականին վարկային կազմակերպությունների զուտ շահույթը, հաշվարկված ըստ ՖՀՄՍ-ի, 54.6 մլրդ դրամ է, շահութաբերությունն ըստ ակտիվների (RoA)՝ 10.7%, իսկ ըստ կապիտալի (RoE)՝ 19.6%:

Վարկային կազմակերպությունների տոկոսային եկամուտներն ավելացել են 16.7%-ով՝ հիմնականում պայմանավորված տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված եկամուտների աճով: Ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռ ունեն տնտեսությանը տրամադրված վարկերից և առևտրային բանկերում, այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված եկամուտները՝ համապատասխանաբար 66.1% և 21.4% (նախորդ տարի՝ 65.9% և 24.0%):

Ոչ տոկոսային եկամուտներն ավելացել են 23.1%-ով՝ հիմնականում պայմանավորված միջնորդավճարներից ստացված եկամուտների աճով: Ոչ տոկոսային եկամուտներում մեծ տեսակարար կշիռ ունեն ֆակտորինգից ստացված եկամուտները՝ 73.2% (նախորդ տարի՝ 73.1%):

**Գրաֆիկ 25**


***Վարկային կազմակերպությունների եկամուտների կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 26**

***Վարկային կազմակերպությունների ծախսերի կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*[15] Վերահսկողական հաշվետվությունների և ՖՀՄՍ-ի հիմնական տարբերությունը ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելն է:*

Տոկոսային ծախսերն ավելացել են 19.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ժամկետային փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսների աճով: Տոկոսային ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների և ժամկետային փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսները՝ համապատասխանաբար 38.4% և 38.8% (նախորդ տարի՝ 41.9% և 30.5%):

Ոչ տոկոսային ծախսերն ավելացել են 25.3%-ով՝ հիմնականում պայմանավորված հաշվարկված աշխատավարձի, դրան հավասարեցված այլ վճարումների աճով: Ոչ տոկոսային ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն հաշվարկված աշխատավարձի, դրան հավասարեցված այլ վճարումների և այլ ոչ տոկոսային ծախսերի դիմաց վճարվելիք տոկոսները՝ համապատասխանաբար 50.6% և 13.7% (նախորդ տարի՝ 54.3% և 13.8%):

## ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ


#### *ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերություններ*

31.12.2018 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 7 ապահովագրական ընկերություններ՝ 43 մասնաճյուղերով: Բոլոր ապահովագրական ընկերությունները իրականացնում են ոչ կյանքի ապահովագրություն:

Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող ապահովագրավճարներ/ՀՆԱ ցուցանիշը 31.12.2018 թ. կազմել է 0.69%. 31.12.2017 թ. համեմատ ավելացել է 0.06 տոկոսային կետով[16]: Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարների մեծությունը 2018 թ. կազմել է 13.9 հազար դրամ (2017 թ.՝ 11.8 հազար դրամ):

*Գրաֆիկ 27*

*Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս*




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*[16] 2017 թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով «ապահովագրավճարներ / ՀՆԱ» ցուցանիշը միջինում կազմել է 3.6%, զարգացող երկրներում՝ 1.5% (աղբյուրը՝ Swiss Re, Sigma, No 3/2018, մայիս, 2018):*

### *Կենտրոնացվածությունը ՀՀ ապահովագրական համակարգում*

2018 թվականին ապահովագրական համակարգի կենտրոնացվածությունը բնութագրող Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով նվազել է, բացառությամբ ըստ կապիտալի կենտրոնացվածության և ապահովագրավճարների կենտրոնացվածության գործակիցների, որոնք աճել են:

*Աղյուսակ 12. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը*


| | 31.12.15 | 31.12.16 | 31.12.17 | 31.12.18 |
|---|---|---|---|---|
| Ակտիվներ | 1916 | 1947 | 1915 | 1896 |
| Պարտավորություններ | 2246 | 2190 | 1992 | 1947 |
| Կապիտալ | 1649 | 1773 | 1940 | 1964 |
| Ապահովագրական գումարներ | 2642 | 2567 | 2202 | 2111 |
| Ապահովագրավճարներ | 2239 | 2135 | 2066 | 2085 |

*Աղյուսակ 13. Ապահովագրական համակարգի կենտրոնացվածության մակարդակը (%)*

| | 31.12.16 | 31.12.17 | 31.12.18 |
|---|---|---|---|
| ***Ակտիվներ*** | | | |
| ԿԳ 2 (խոշորագույն **երկու** ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում) | 55 | 54 | 53 |
| ԿԳ 5 (խոշորագույն **հինգ** ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում) | 86 | 86 | 86 |
| ***Պարտավորություններ*** | | | |
| ԿԳ 2 | 59 | 55 | 53 |
| ԿԳ 5 | 93 | 91 | 90 |
| ***Կապիտալ*** | | | |
| ԿԳ 2 | 49 | 52 | 53 |
| ԿԳ 5 | 85 | 85 | 87 |
| ***Ապահովագրական գումարներ*** | | | |
| ԿԳ 2 | 68 | 59 | 55 |
| ԿԳ 5 | 95 | 94 | 93 |
| ***Ապահովագրավճարներ*** | | | |
| ԿԳ 2 | 56 | 54 | 54 |
| ԿԳ 5 | 95 | 94 | 93 |

*Գրաֆիկ 28*

***Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը***




*1. Կանոնադրական կապիտալ,*
*2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ,*
*3. Ընդհանուր կապիտալի այլ տարրեր*

*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

Ապահովագրական ընկերությունների միջև բևեռացվածությունը նախորդ տարվա համեմատ հիմնականում ունեցել է նվազման միտում: Խոշորագույն երկու (ԿԳ 2) և հինգ (ԿԳ 5) ընկերությունների պարտավորությունների և ապահովագրական գումարների կենտրոնացվածությունը նվազել է, իսկ կապիտալի բևեռացվածությունը նախորդ տարվա համեմատ աճել է:

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼ

Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալը 2018 թվականին նվազել է 0.2%-ով՝ կազմելով 19.2 մլրդ դրամ: Կանոնադրական կապիտալն ավելացել է 6.5%-ով՝ կազմելով 16.0 մլրդ դրամ: Կապիտալի նվազումը հիմնականում պայմանավորվել է չբաշխված շահույթի 882.8 մլն դրամով նվազմամբ:

Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռները 2018 թ. վերջին կազմել են համապատասխանաբար 31.7% և 68.3%: Ապահովագրական ընկերությունների կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 160.6% (պահանջվող նվազագույն սահմանաչափը՝ 100.0%):

31.12.2018 թ. դրությամբ ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների փայամասնակցության տեսակարար կշիռը 48.4% է: Ոչ ռեզիդենտների փայամասնակցությամբ 3 ապահովագրական ընկերություններից մեկում ոչ ռեզիդենտների մասնակցությունը 100% է:


## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ

Ապահովագրական ընկերությունների ակտիվները հաշվետու տարում ավելացել են 4.4%-ով (2.2 մլրդ դրամով) և 31.12.2018 թ. դրությամբ կազմել 51.7 մլրդ դրամ:

Հիմնականում ավելացել են ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերը՝ 43.0%-ով (1.1 մլրդ դրամով) և ավանդները բանկերում՝ 6.1%-ով (1.1 մլրդ դրամով):

*Գրաֆիկ 29*

***Ապահովագրական ընկերությունների ակտիվների կառուցվածքը***




*1. Ավանդներ բանկերում, 2. Պետական և ոչ պետական արժեթղթեր (այդ թվում՝ ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր), 3. Ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով, 4. Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական պահուստներում, 5. Ապագա ժամանակաշրջանի ծախսեր և ապահովագրության գծով կանխավճարներ, 6. Հիմնական միջոցներ, 7. Հատուցումների գծով պահանջներ, 8. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 9. Կանխիկ դրամական միջոցներ և բանկային հաշիվներ, 10. Այլ ակտիվներ*

*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

Տարեվերջի դրությամբ ապահովագրական համակարգի ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել ավանդները բանկերում (37.7%), պետական արժեթղթերը (11.8%) և ապահովադիրներից ստացվելիք գումարներն ուղղակի ապահովագրության գծով (10.5%): Ավանդների 79.5%-ը բաժին է ընկել ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդներին, իսկ 20.5%-ը՝ ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդներին:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների միջին ժամկետայնությունը 1.2 տարի է: Մասնավորապես՝ ավանդների միջին ժամկետայնությունը 0.8 տարի է, պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը՝ 3.8 տարի:


Ապահովագրական ընկերությունների ներդրումները հիմնականում տեղաբաշխված են ՀՀ դրամով: 31.12.2018 թ. արտարժութային ակտիվները կազմել են ընդհանուր ակտիվների 2.1%-ը կամ 1.1 մլրդ դրամ: Արտարժութային ակտիվները հիմնականում ավանդներն են ՀՀ բանկերում. 2018 թ. վերջին կազմել են 592 մլն դրամ կամ ընդհանուր ավանդների 3.0%-ը:

Ապահովագրական համակարգի ակտիվները հիմնականում տեղաբաշխված են բարձր իրացվելի ակտիվներում: 2018 թվականին ընկերությունների կողմից իրացվելիության նորմատիվի խախտում չի արձանագրվել:

Տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվները 31.12.2018 թ. դրությամբ գերազանցել են զուտ տեխնիկական պահուստների[17] մեծությունը 61.3 տոկոսային կետով:

**Գրաֆիկ 30**


***Ակտիվների ծավալը ըստ ապահովագրական ընկերությունների***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 31**

***Ապահովագրական ընկերությունների տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների շարժը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները 2018 թվականին ավելացել են 7.3%-ով կամ 2.2 մլրդ դրամով՝ տարեվերջին կազմելով 32.5 մլրդ դրամ: Պարտավորությունների հիմնական աճն ապահովել են տեխնիկական պա-

[17] *Զուտ տեխնիկական պահուստները նվազեցված են վերաապահովագրողների մասնաբաժնով տեխնիկական պահուստներում:*

հուստները (ավելացել են 1.3 մլրդ դրամով) և ռեպո համաձայնագրերը (ավելացել են 1.1 մլրդ դրամով): Տեխնիկական պահուստների գերակշիռ մասը՝ 68.7%-ը, կազմել են չվաստակած ապահովագրավճարների պահուստները (ՉԱՊ):

31.12.2018 թ. դրությամբ պարտավորությունների կազմում մեծ տեսակարար կշիռ են ունեցել տեխնիկական պահուստները (65.2%) և ռեպո համաձայնագրերը (11.0%):

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ապահովագրական համակարգը 2018 թ. աշխատել է վնասով: Ապահովագրական ընկերությունների վերահսկողական հաշվետվությունների հիման վրա հաշվարկված զուտ վնասի մեծությունը 2018 թվականին կազմել է 105 մլն դրամ[18]: Վնասով է աշխատել 3 ապահովագրական ընկերություն:


*ՖՀՄՄ համաձայն՝ ապահովագրական ընկերությունների զուտ շահույթը 2018 թվականին կազմել է 582 մլն դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 1.2%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 2.9%:*

2018 թվականին ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը 41.4 մլրդ դրամ է (2017 թվականին՝ 35.3 մլրդ դրամ): Հաշվեգրված ապահովագրավճարների 49.1%-ը բաժին է ընկել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը, իսկ 25.8%-ը՝ առողջության ապահովագրությանը:

Տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարներն ավելացել են հիմնականում հետևյալ դասերի գծով՝ առողջության, ԱՊՊԱ և դժբախտ պատահարներից ապահովագրության՝ համապատասխանաբար 3.6 մլրդ դրամով (50.2%-ով), 1.2 մլրդ դրամով (6.0%-ով) և 494 մլն դրամով (54.4%-ով): Նշանակալի

*Գրաֆիկ 32*

***Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կառուցվածքը***




*1. Չվաստակած ապահովագրավճարների պահուստ, 2. Պահանջների պահուստներ, 3. Ռեպո համաձայնագրեր, 4. Վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ, 5. Այլ տեխնիկական պահուստներ, 6. Ներգրավված փոխառություններ և վարկեր, 7. Վճարվելիք հատուցումներ, 8. Վճարվելիք գումարներ միջնորդներին, 9. Ստացված կանխավճարներ ապահովագրության գծով, 10. Այլ պարտավորություններ*

*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*[18] ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՄ-ի հիմնական տարբերությունը հավասարակշռման պահուստի հակադարձումից եկամուտներն են:*

աճել է նաև օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը՝ 195 մլն դրամով կամ 213.4%-ով:

Ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված հատուցումների մեծությունը 2018 թ. կազմել է 22.8 մլրդ դրամ (2017 թվականին՝ 18.0 մլրդ դրամ): Հաշվեգրված ապահովագրական հատուցումների 59.3%-ը բաժին է ընկել ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը, իսկ 30.5%-ը՝ առողջության ապահովագրությանը:

Տարվա ընթացքում հաշվեգրված հատուցումներն աճել են հիմնականում ԱՊՊԱ և առողջության ապահովագրության գծով՝ համապատասխանաբար 1.9 մլրդ դրամով կամ 15.9%-ով և 2.9 մլրդ դրամով կամ 73.0%-ով: Նվազել են վարկի ապահովագրության գծով հաշվեգրված հատուցումները՝ 93.6%-ով կամ 225 մլն դրամով:


Ապահովագրական ընկերությունների եկամուտների կառուցվածքում մեծ կշիռ են կազմել վաստակած ապահովագրավճարները՝ 87.2%: Տոկոսային և ոչ տոկոսային եկամուտները կազմել են ընդհանուր եկամուտների 6.6%-ը: Ապահովագրության գծով այլ եկամուտները կազմել են ընդհանուր եկամուտների 6.2%-ը, որոնց գերակշիռ մասը սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներն են:

Ծախսերի կառուցվածքում մեծ կշիռ են կազմել ապահովագրական հատուցումները և զուտ տեխնիկական պահուստները՝ 55.0%: Տոկոսային և ոչ տոկոսային ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 25.8%-ը, ապահովագրության այլ ծախսերը՝ ընդհանուր ծախսերի 19.1%-ը: Դրանց գերակշիռ մասը ապահովագրական գործակալներին տրվող միջնորդավճարների գծով զուտ ծախսերն են:

Ապահովագրական ընկերությունների տոկոսային եկամուտների մեծությունը տարեսկզբից նվազել է 348 մլն դրամով (11.1%-ով) և կազմել 2.8 մլրդ դրամ: Տոկոսային եկամուտների 59.1%-ը բաժին է ընկել բանկերում ներդրված ընթացիկ ավանդների և բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների տոկոսային եկամուտներին: Տոկոսային եկամուտների 34.0%-ը

**Գրաֆիկ 33**


***Պարտավորությունների ծավալը ըստ ապահովագրական ընկերությունների***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 34**

***Ապահովագրական համակարգի հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքը***




*1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Հրդեհից և բնական աղետներից, 4. Ցամաքային տրանսպորտի, 5.Դժբախտ պատահարներից, 6. Փոխադրվող գույքի (բեռների), 7. Աջակցության, 8. Ընդհանուր պատասխանատվության, 9. Ապահովագրության այլ դասեր*

*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

բաժին է ընկել ընթացիկ և ոչ ընթացիկ արժեթղթերի տոկոսային եկամուտներին: Տարվա ընթացքում ընկերությունների ոչ տոկոսային ծախսերի մեծությունը կազմել է 9.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.0%-ով (1.1 մլրդ դրամով): Հիմնականում ավելացել են ապահովագրական ընկերությունների անձնակազմի գծով ծախսերը՝ 13.9%-ով (634 մլն դրամով): Ոչ տոկոսային ծախսերի 53.7%-ը բաժին է ընկել ապահովագրական ընկերությունների անձնակազմի գծով ծախսերին:


Ապահովագրական համակարգի վնասաբերության ցուցանիշի մեծությունը 66.4%[19] է՝ նախորդ տարվա համեմատ աճել է 6.7 տոկոսային կետով, իսկ ծախսատարության ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.3 տոկոսային կետով և տարեվերջի դրությամբ կազմել 28.6%[20]:

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Հաշվետու տարվա վերջի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակը կազմել է 826.9 հազար՝ 19.2%-ով ավելի 31.12.2017 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակից: Պայմանագրերի քանակի աճ է գրանցվել հիմնականում դժբախտ պատահարներից ապահովագրության գծով՝ 59.5%-ով (87.1 հազարով), ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) գծով՝ 6.0%-ով (27.4 հազարով) և հրդեհից ու բնական աղետներից ապահովագրության գծով՝ 50.7%-ով (17.5 հազարով):

*Գրաֆիկ 35*

***Ապահովագրական համակարգի հաշվեգրված հատուցումների կառուցվածքը***




*1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Հրդեհից և բնական աղետներից, 4. Ցամաքային տրանսպորտի, 5. Փոխադրվող գույքի (բեռների), 6. Դժբախտ պատահարներից, 7. Աջակցության, 8. Ընդհանուր պատասխանատվության, 9. Ապահովագրության այլ դասեր*


*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*[19] Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ (զուտ հաշվեգրված հատուցումներ + զուտ հատկացումներ տեխնիկական պահուստներին (բացառությամբ՝ ՉԱՊ) + այլ գործառնական ծախսեր ապահովագրության գծով) / (զուտ վաստակած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետվերադարձվող գումարներ):*

*[20] Ծախսատարության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ ոչ տոկոսային ծախսեր / (զուտ վաստակած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետվերադարձվող գումարներ):*

**Գրաֆիկ 36**

***Ապահովագրական համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը***





*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

Ապահովագրական գումարները 2018 թվականին ավելացել են 16.5%-ով և տարվա վերջի դրությամբ կազմել 33.4 տրլն դրամ:

Ապահովագրական գումարների աճը պայմանավորված է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ապահովագրության գումարների աճով (3.6 տրլն դրամով կամ 16.5%-ով) և օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գումարների աճով (1.2 տրլն դրամով կամ 83.5%-ով):

**Գրաֆիկ 37**

***31.12.2018 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի կառուցվածքը***




*1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Հրդեհից և բնական աղետներից, 4. Ցամաքային տրանսպորտի, 5. Փոխադրվող գույքի (բեռների), 6. Դժբախտ պատահարներից, 7. Աքսկցության, 8. Ընդհանուր պատասխանատվության, 9. Ապահովագրության այլ դասեր*

*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*


## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2018 թ. վերջի դրությամբ վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 6.2 տրլն դրամ կամ ապահովագրական ընկերությունների ստանձնած ռիսկերի 18.7%-ը: 2018 թվականի ընթացքում վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների մեծությունը կազմել է 5.4 մլրդ դրամ

կամ ապահովագրավճարների 12.9%-ը, վերաապահովագրողներից ստացվող ապահովագրական հատուցումների գումարների մեծությունը՝ 1.4 մլրդ դրամ կամ հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների 6.3%-ը:

**Գրաֆիկ 38**

***31.12.2018 թ. դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների կառուցվածքը***




*1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ՊՊՊԱ), 2. Առողջության, 3. Հրդեհից և բնական աղետներից, 4. Ցամաքային տրանսպորտի, 5. Փոխադրվող գույքի (բեռների), 6. Դժբախտ պատահարներից, 7. Աջակցության, 8. Ընդհանուր պատասխանատվության, 9. Օդանավերի և օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության, 10. Ապահովագրության այլ դասեր*

*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

31.12.2018 թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ են մատուցել 17 ՀՀ առևտրային բանկեր և 10 ներդրումային ընկերություններ:

Տարվա ընթացքում ներդրումային ընկերությունների պարտավորությունների և կապիտալի կենտրոնացվածության մակարդակը դրսևորել է աճի միտում:


***Աղյուսակ 14. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը***

| Ցուցանիշներ | 31.12.2014 | 31.12.2015 | 31.12.2016 | 31.12.2017 | 31.12.2018 |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր ակտիվներ | 0.20 | 0.21 | 0.18 | 0.18 | 0.20 |
| Ընդհանուր պարտավորություններ | 0.21 | 0.22 | 0.18 | 0.17 | 0.21 |
| Ընդհանուր կապիտալ | 0.19 | 0.18 | 0.19 | 0.17 | 0.18 |

Ներդրումային ընկերությունների ակտիվները նախորդ տարվա համեմատ նվազել են 12%-ով՝ կազմելով 56.6 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալն աճել է 8.4%-ով՝ տարեվերջին կազմելով 10.7 մլրդ դրամ: 2018 թվականին ներդրումային ընկերությունների զուտ շահույթը կազմել է 1.4 մլրդ դրամ: Գրեթե բոլոր ընկերությունները տարվա ընթացքում աշխատել են շահույթով՝ բացառությամբ մեկ ընկերության:

**Գրաֆիկ 39**

***Ներդրումային ընկերությունների ակտիվների ծավալը և վերջիններիս աճի տեմպը 2012-2018 թթ.***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը (ներառյալ ռեպո գործառնությունները՝ առանց ՀՀ ԿԲ-ի հետ գործառնությունների) նվազել է 2.9%-ով և կազմել 9 տրլն 44.6 մլրդ դրամ:

ՀՀ արժեթղթերի շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (առանց ՀՀ ԿԲ հետ իրականացված գործառնությունների) կազմել է արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության 89.4%-ը: Նախորդ տարվա համեմատ ռեպո գործառնությունների ծավալը (առանց ՀՀ ԿԲ-ի հետ իրականացված գործառնությունների) նվազել է 5%-ով և կազմել 8 տրլն 88.5 մլրդ դրամ:

Կնքված ռեպո գործառնությունները իրականացվել են պետական պարտատոմսերով, ընդ որում՝ 43.4%-ը պետական միջնաժամկետ պարտատոմսերով, 55.9%-ը՝ երկարաժամկետ և 0.7%-ը՝ կարճաժամկետ պարտատոմսերով:

Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների մեջ ևս գերակշռել են պետական արժեթղթերով իրականացվող գործառնությունները՝ կազմել են 715 մլրդ դրամ կամ ընդհանուր շրջանառության 74.8%-ը:


Կորպորատիվ պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 12.2%-ով և կազմել է 111.9 մլրդ դրամ կամ ընդհանուր շրջանառության 11.7%-ը: Բաժնետոմսերով իրականացված գործառնությունների ծավալն ավելացել է 53.7 մլրդ դրամով՝ կազմելով 129 մլրդ դրամ կամ արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 13.5%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի ընդհանուր գործառնություններում բորսայական առուվաճառքի տեսակարար կշիռը կազմել է 10.1%:

2018 թվականին կարգավորվող շուկայում արժեթղթերով իրականացված գործառնությունների ծավալն աճել է 8.8%-ով (8.7 մլրդ դրամով) և կազմել 98.6 մլրդ դրամ:

**Գրաֆիկ 40**


***2012-2018 թթ. ներդրումային ընկերությունների կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունների ծավալները***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 41**

***Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերով գործառնությունների ծավալները (առանց կենտրոնական բանկի գործառնությունների) 2012-2018 թթ.***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

Կարգավորվող շուկայում պետական պարտատոմսերով առուվաճառքի գործառնությունները կազմել են ընդհանուր շրջանառության 53.1%-ը, կորպորատիվ արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները՝ 44.9%-ը, իսկ բաժնային արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները՝ 2.0%-ը:

31.12.2018 թ. դրությամբ, արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 3.6 մլրդ դրամով և կազմել 4 մլրդ 771 մլն դրամ:

ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացման մակարդակը 145.7 մլրդ դրամ է, իսկ կապիտալացում/ՀՆԱ ցուցանիշը[21]՝ 2.5%:

31.12.2018 թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում վարվում են անվանական արժեթղթերի սեփականատերերի 2491 ռեեստրներ, իսկ ՀԿԴ-ում արժեթղթերի հաշիվ ունեցող արժեթղթերի սեփականատերերի թիվը 102987 է:


Տարեվերջին կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 22 հաշվետու թողարկողների 79 դասի արժեթղթեր, ընդ որում՝ թողարկողներից երեքը թողարկել է ինչպես բաժնետոմսեր, այնպես էլ պարտատոմսեր:

Հաշվետու թողարկողներից 10-ը թողարկել են 10 դասի բաժնետոմս, իսկ 16-ը՝ 69 դասի պարտատոմս: Պարտատոմսերի 44 թողարկումներ արտարժութային են, որոնց կշիռը ընդհանուր ծավալում 78.3% է:

31.12.2018 թ. դրությամբ հաշվետու թողարկողների կողմից թողարկված բաժնետոմսերի ընդհանուր ծավալն անվանական արժեքով կազմել է 63.3 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի ընդհանուր ծավալը՝ 147.7 մլրդ դրամ: Թողարկված պարտքային արժեթղթերի 89.9%-ը բաժին է ընկել 10 առևտրային բանկերի, իսկ 4 բանկերի մասնակցությունը բաժնային արժեթղթերում 88.5% է:

**Գրաֆիկ 42**


***Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների կառուցվածքը 2012-2018 թթ.***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 43**

***ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացման և կապիտալացում/ՀՆԱ ցուցանիշը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

*[21] Հաշվետու թողարկողների կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերի քանակի և դրանցով կնքված վերջին գործարքի գնի արտադրյալ:*

### *ՀՀ տարածքում գործող պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր*

31.12.2018 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների լիցենզիա են ունեցել 2 ներդրումային ֆոնդի կառավարիչներ: Յուրաքանչյուրը կառավարում է 3 պարտադիր կենսաթոշակային ֆոնդ:

31.12.2018 թ. դրությամբ կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը 157.2 մլրդ դրամ է, զուտ ակտիվների արժեք / ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2.6%: Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի ցուցանիշը 2017 թ. համեմատ նվազել է և 31.12.2018 թ. դրությամբ կազմել 0.27:

2018 թ. վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերի ակտիվ մասնակիցների թիվը 323 հազար է (նախորդ տարվա համեմատ ավելացել է 230 հազարով):

***Աղյուսակ 15. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը 31.12.2018 թ. դրությամբ (Net Asset Value - NAV)***


| Կառավարչի անվանումը | Կենսաթոշակային ֆոնդի անվանումը | Զուտ ակտիվների արժեքը *(NAV)* |
|---|---|---|
| Ամունդի Ակբա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՓԲԸ | *Հավասարակշռված ֆոնդ* | 1.7 *մլրդ* դրամ |
| | *Պահպանողական ֆոնդ* | *77.0 մլրդ դրամ* |
| | *Կայուն եկամտային ֆոնդ* | 988 մլն դրամ |
| Ցե Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՍՊԸ | *Հավասարակշռված ֆոնդ* | 749 մլն դրամ |
| | *Պահպանողական ֆոնդ* | 76.2 մլրդ դրամ |
| | *Կայուն եկամտային ֆոնդ* | 509 մլն դրամ |

### *Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները*

2018 թ. ընթացքում, 2017 թ. համեմատությամբ, ֆոնդերի ներդրումների կառուցվածքում 1 տոկոսային կետով ավելացել են

***Գրաֆիկ 44***

***Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների կառուցվածքը***




*1. ՀՀ պետական պարտատոմսեր, 2. Դրամական միջոցներ և ավանդներ, 3. Օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթեր, 4. Այլ պարտատոմսեր, 5. Այլ ակտիվներ,*

*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

ներդրումները ոչ պետական պարտատոմսերում և կազմել ընդհանուր ակտիվների 10%-ը: Դրամական միջոցներում ու ավանդներում ներդրումներն ավելացել են 3 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ակտիվների 33%-ը, օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթերում ներդրումները նվազել են 3 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում 2 տոկոսային կետով կրճատվել է պետական պարտատոմսերի տեսակարար կշիռը:

Ֆոնդերի ակտիվների 30.0%-ը (47.0 մլրդ դրամը) կազմել են ներդրումները ՀՀ պետական պարտատոմսերում: ՀՀ պետական եվրոբոնդերում ներդրումները կազմել են 380 մլն դրամ: Ֆոնդերի ներդրում հանդիսացող պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը 9 տարի է, միջին կշռված եկամտաբերությունը (մինչև մարում)՝ 8.7%:

Ֆոնդերի արտարժութային ակտիվների տեսակարար կշիռը ներկայումս 29.5% է (46.4 մլրդ դրամ), որի գերակշիռ մասը (39.3 մլրդ դրամը) օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթեր են:

Ֆոնդերի միջին եկամտաբերությունը 2018 թ. կազմել է 4.3%: 2014 թ. սկզբից կուտակային միջին եկամտաբերությունը չորս տարվա համար կազմել է 48.2% (6 ֆոնդերի 1 փայի միջին գինը ստեղծման պահի 1000 դրամից աճել է 482 դրամով և 31.12.2018 թ. կազմել 1482 դրամ):

### *ՀՀ տարածքում գործող կամավոր կենսաթոշակային ֆոնդերը 31.12.2018 թ. դրությամբ*

31.12.2018 թ. դրությամբ ՀՀ տարածքում կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների լիցենզիա ունեցել է 1 ներդրումային ֆոնդի կառավարիչ, որը կառավարում է 2 կամավոր կենսաթոշակային ֆոնդ և 1 ներդրումային ֆոնդ:

31.12.2018 թ. դրությամբ կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը կազմել է 124.9 մլն դրամ, ներդրումային ֆոնդի զուտ ակտիվների արժեքը՝ 1.4 մլրդ դրամ:

# ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2018 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 10 վճարահաշվարկային կազմակերպություններ, այդ թվում՝ 4 ընկերություն ունի միայն դրամական փոխանցում իրականացնելու լիցենզիա, 4 ընկերություն՝ դրամական փոխանցում և վճարային գործիքների ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու լիցենզիա, 2 ընկերություն՝ միայն վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու լիցենզիա, 4 ընկերություն՝ նաև էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն:

2018 թ. վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգի և դրամական փոխանցման լիցենզիա ունեցող ընկերությունների ակտիվներն աճել են 54.2%-ով՝ տարեվերջին կազմելով 14.5 մլրդ դրամ, պարտավորություններն աճել են 56.3%-ով՝ կազմելով 11.3 մլրդ դրամ, իսկ կապիտալն աճել է 47.2%-ով՝ կազմելով 3.3 մլրդ դրամ: Միայն դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները և կապիտալը տարվա ընթացքում աճել են համապատասխանաբար 6.9%-ով, 18.2%-ով և 0.7%-ով՝ կազմելով 23.6 մլրդ դրամ, 9.2 մլրդ դրամ և 14.4 մլրդ դրամ:


Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգի և դրամական փոխանցման լիցենզիա ունեցող ընկերությունները հաշվետու տարում ապահովել են 1.1 մլրդ դրամի շահույթ, իսկ միայն դրամական փոխանցում իրականացնող ընկերությունները՝ 551 մլն դրամի:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ 6 վճարահաշվարկային կազմակերպություններ ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների և գրանցված մասնաճյուղերի միջոցով իրականացրել են կոմունալ, հեռախոսի, բջջային և ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարումների, վարկերի մարմանն ուղղված միջոցների, բյուջե ուղղված տուգանքների և պետական տուրքերի վճարների ընդունում և այլն: Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 28%-ով՝ կազմելով 655.8 մլրդ դրամ:


*Գրաֆիկ 45*

***Վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական վիճակը***

**Միայն դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություններ**




**Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություններ**





*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

Արտասահմանից Հայաստանի Հանրապետություն ուղղված վճարումները կատարվում են առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով: 2018 թ. դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարվել է 36.3 մլրդ դրամի փոխանցում (նախորդ տարվա համեմատ 21.8 մլրդ դրամով ավելի): Միևնույն ժամանակ, նույն կազմակերպությունների կողմից արտասահման կատարվել է 2.0 մլրդ դրամի փոխանցում (2017 թ. համեմատ ավելացել է 37 մլն դրամով):

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը հաշվետու տարում իրականացրել է 2 տրլն 623.3 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնություններ (2017 թ. համեմատ 34.2%-ով ավելի): Մասնավորապես՝ այլ պրոցեսինգային կենտրոնում գրանցված վճարային քարտերով իրականացվել է 151.1 մլրդ դրամ ծավալի գործառնության հավաստագրում (նախորդ տարվա համեմատ 13%-ով ավելի):

**Գրաֆիկ 46**

***Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների ծավալը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

# ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

*ՀՀ վճարահաշվարկային բնագավառի հիմնական ցուցանիշները*

2018 թ. ընթացքում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 1 տրլն 861.7 մլրդ դրամի գործառնություն: Քարտերով անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 39%-ով և կազմել 396 մլրդ դրամ: Ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 246.0 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 101.2 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 48.9 մլրդ դրամ): Շրջառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 18%-ով և կազմել 2.0 մլն: Ընդ որում՝ քարտերով իրականացված անկանխիկ վճարումների (այդ թվում նաև ինտերնետ գործառնությունները) մասնաբաժինն ընդհանուր քարտային գործառնություններում 2017 թվականի համեմատ աճել է 3.0 տոկոսային կետով՝ կազմելով 21.3%:

Առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով արտասահմանից ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները նախորդ տարվա համեմատ աճել են 3.6%-ով և կազմել 885.3 մլրդ դրամ (այդ թվում նաև ՍՎԻՖԹ-ի միջոցով), իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալն աճել է 14.7%-ով և կազմել 536.4 մլրդ դրամ: Արդյունքում՝ զուտ ներհոսքը նվազել է և կազմել 348.9 մլրդ դրամ:

# ՀՀ ԿԲ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ


### *Էլեկտրոնային վճարումների համակարգ*

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացվում են միջբանկային դրամական փոխանցումներ և այլ համակարգերով (ԱՐՔԱ, բորսայական հարթակներ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ) կատարված գործառնությունների վերջնահաշվարկներ:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջբանկային դրամական փոխանցումների միջին օրական ծավալը նվազել է 0.3%-ով՝ կազմելով 61.2 մլրդ դրամ, իսկ քանակն ավելացել է 9.4%-ով՝ կազմելով 14 հազար: Արդյունքում՝ նվազել է մեկ էլեկտրոնային փոխանցման միջին օրական ծավալը՝ կազմելով մոտ 4.4 մլն դրամ:

**Գրաֆիկ 47**

***Էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնությունների) կատարված միջին օրական փոխանցումները***





*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

### *Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ*

2018 թ. վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 17 բանկեր, 2 ներդրումային ընկերություններ, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի կառավարման հիմնադրամը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, ՀՀ ֆինանսների նախարարությունը (պետական պարտատոմսերի թողարկողի կարգավիճակով), ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (որպես պահառու և հաշվարկային բանկ):

**Գրաֆիկ 48**

***ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների (առանց բորսայական գործառնությունների) ծավալի կառուցվածքը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## ՎՃԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՀՀ-ում անկանխիկ վճարումները կատարվում են վճարման հանձնարարականներով, պահանջագրերով, չեկերով, վճարային քարտերով և էլեկտրոնային փողերով: 2018 թվականին անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 26.8 տրլն դրամ, իսկ քանակը՝ 45.2 մլն: Վճարումների ծավալի գերակշիռ մասը՝ 98.5%-ը, բաժին է ընկել վճարման հանձնարարականներին, 1.5%-ը՝ քարտերով անկանխիկ գործառնություններին, իսկ մնացածը՝ չեկերին, պահանջագրերին և էլեկտրոնային փողերին: Վճարային գործիքների տարածվածության տեսանկյունից կարևորվում են վճարային քարտերը, որոնցով իրականացված անկանխիկ վճարումները կազմել են ընդհանուր անկանխիկ վճարումների քանակի 40%-ը:


## ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

31.12.2018 թ. դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 16 առևտրային բանկերի կողմից: Հաշվետու տարում քարտերի սպասարկման նպատակով տեղադրված ավտոմատ գանձման մեքենաների քանակը կազմել է 1546, առևտրային բանկերի կողմից տեղադրված POS-տերմինալների քանակը՝ 8796, վիրտուալ POS-տերմինալների քանակը՝ 1036, իսկ բանկային ավտոմատացված մեքենաների քանակը՝ 35:

Վճարային քարտերի քանակը 2018 թ. ավելացել է 18.0%-ով՝ կազմելով 2.0 մլն: Գործող «ArCa» քարտերի քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 11.0%-ով և կազմել 629 հազար: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 22.1%-ով, այդ թվում՝ «VISA»-ն՝ 32.3%-ով և կազմել 806 հազար, իսկ «MasterCard»-ը՝ 10.5%-ով և կազմել 546 հազար: Միջազգային այլ քարտերի քանակը նվազել է 5.4%-ով՝ կազմելով 43 հազար:

*Գրաֆիկ 49*

*Տրամադրված վճարային քարտեր*





*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

Առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերում «ArCa», «VISA», «MasterCard» քարտերի տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 31%, 40% և 27%, իսկ մնացած 2%-ը միջազգային այլ քարտային համակարգերի քարտերն են, որոնցում ընդգրկված են նաև «HSBC debit» և «AmEx» քարտերը:

ՀՀ տարածքում վճարային քարտերով կատարված գործառնությունների ընդհանուր ծավալը (ներառյալ՝ արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով գործառնությունները) ավելացել է 19.7%-ով՝ կազմելով 1.9 տրլն դրամ, իսկ քանակը՝ 30.3%-ով՝ կազմելով 45 մլն: Ընդհանուր գործառնությունների ծավալի 21%-ը բաժին է ընկել «ArCa», 46%-ը՝ «VISA», 28%-ը՝ «MasterCard» և 5%-ը՝ այլ քարտերով իրականացված գործառնություններին: «ArCa» վճարային քարտերով գործառնությունների ծավալն աճել է 9.5%-ով՝ կազմելով 388.2 մլրդ դրամ, իսկ «VISA» և «MasterCard» վճարային քարտերով գործառնությունների ծավալներն աճել են համապատասխանաբար 46.2%-ով և 28.4%-ով՝ կազմելով 860.6 մլրդ դրամ և 528.4 մլրդ դրամ: Միջազգային այլ քարտերով գործառնությունների ծավալն աճել է 23%-ով և կազմել 96.6 մլրդ դրամ:

**Գրաֆիկ 50**


***ՀՀ բանկերի կողմից վճարային քարտերի տրամադրման շարժը***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 51**

***ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված գործառնությունները 2012 - 2018 թթ.***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

31.12.2018 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդներին դրամական փոխանցումների իրականացման ծառայություններ մատուցելու նպատակով անդամակցում են 10 միջազգային և 2 հայաստանյան համակարգերի:


Միջազգային դրամական փոխանցումների համակարգերին մասնակից առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2018 թ. կազմել է 604.3 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.4%-ով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 167 հազար դրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 4.1%-ով):

Միջազգային փոխանցումների համակարգերով դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ աճել է 3.7%-ով՝ կազմելով 497.2 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումներն ավելացել են 6.4%-ով և կազմել 281.0 մլրդ դրամ. մեկ վճարման միջինը 2017 թ. համեմատ նվազել է 6.5%-ով՝ կազմելով 3.4 մլն դրամ: Միաժամանակ, առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներն արտասահման ավելացել են 20.2%-ով և կազմել 429.4 մլրդ դրամ: Արդյունքում՝ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներում դիտվում է 148.3 մլրդ դրամ ծավալի դրամական միջոցների զուտ արտահոսք:

**Գրաֆիկ 52**


***Քարտեր սպասարկող մարքավորումների միջոցով կատարված գործարքները***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

**Գրաֆիկ 53**

***Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով ֆիզիկական անձանց կողմից արտասահմանից ստացումներ***




*Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:*

# ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության, զարգացման, վճարահաշվարկային համակարգի կատարելագործման քաղաքականության ներքո Կենտրոնական բանկը մշտապես արդիականացնում և կատարելագործում է ֆինանսական համակարգի կարգավորումն ու վերահսկողությունը:

### *ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության զարգացման հեռանկարները*

2018 թ. շարունակվել են բանկային համակարգի կարգավորման դաշտում Բազել 3-ով նախատեսվող պահանջների, մասնավորապես՝ կապիտալի պահպանման, հակացիկլիկ և համակարգային բուֆերների ներդրման ուղղությամբ աշխատանքները:

2018 թ. Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից իրականացվել է ՀՀ ֆինանսական հատվածի գնահատման ծրագիրը (FSAP): Արդյունքում՝ բարձր է գնահատվել Բանկային վերահսկողության բազելյան հիմնարար սկզբունքներին ՀՀ բանկային համակարգի կարգավորման և վերահսկողական գործընթացների համապատասխանության մակարդակը: Վերոնշյալ սկզբունքներին ՀՀ բանկային համակարգի կարգավորման և վերահսկողական գործընթացներն ամբողջությամբ կամ հիմնականում համապատասխանում են 97%-ով. ցուցանիշը զգալիորեն բարելավվել է նախորդ տարիների համեմատ (2012 թ. կազմել է 93%, իսկ 2005 թ.՝ 67%): Կարևորելով դոլարայնացման մակարդակի նվազեցմանը, Բազել 3-ի պահանջների և ռիսկերի վրա հիմնված վերահսկողության ներդրմանն ուղղված միջոցառումների շարունակականությունն ու կատարելագործումը՝ ծրագրի շրջանակներում արվել են մի շարք առաջարկություններ: Մասնավորապես, հաշվի առնելով բանկային համակարգի ցածր շահութաբերության մակարդակը, արտարժութային ռիսկից ածանցվող վարկային և իրացվելիության ռիսկերի նվազեցման անհրաժեշտությունը, առաջարկվել է ներդնել իրացվելիության և կապիտալի բուֆերների նոր պահանջները, չաշխատող և վերանայված վարկերի հաշվարկը և այլն: Առաջարկվել է նաև նախաձեռնել ֆինանսական ճգնաժամերի կառավարման գործընթացների կատարելագործման աշխատանքներ՝ այն առավել սահուն և համապարփակ դարձնելու նպատակով:

Կատարվել են տարբեր ոլորտների և սոցիալական նշանակության ծրագրային վարկերի զարգացմանը նպատակաուղղված աշխատանքներ: Մասնավորապես՝ շարունակվել են ակտիվ աշխատանքները հիպոտեկային շուկայի զարգացման ուղղությամբ:

ՀՀ կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ էական բարելավումներ է կատարել ՀՀ հիպոտեկային շուկայում իրականացվող վարկավորման ծրագրերում, որոնց արդյունքում ավելացել են հիպոտեկային վարկավորման ծավալները և հիպոտեկային վարկերի հասանելիության մակարդակը[22]:

ՀՀ կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ նախաձեռնել է նաև ուսանողական վարկավորման ծրագրի էական բարելավումներ, որոնց շնորհիվ նվազել են ծրագրի ներքո վարկավորման տոկոսադրույքները և ավելացել վարկավորման գումարները:

2019 թվականի ընթացքում կգործարկվեն մի շարք այլ վարկավորման ծրագրեր, մասնավորապես՝ միկրովարկավորման ծրագիրը, որով նախատեսվում է մատչելի վարկերի տրամադրում միկրոբիզնեսին:

2018 թ. բարեփոխումները շարունակվել են նաև ապահովագրական համակարգում, մասնավորապես՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության, ինչպես նաև ապահովագրության այլ տեսակների (առողջության, գյուղատնտեսական ռիսկերի) զարգացման, ինչպես նաև ապահովագրության նոր տեսակների ներդրման անհրաժեշտության գնահատման ուղղությամբ: Իրականացվել են նաև աշխատանքներ ապահովագրական համակարգում անհրաժեշտ ենթակառուցվածքների ներդրման հեռանկարների բացահայտման նպատակով:

Կատարվում է ֆինանսական տեխնոլոգիաների միջազգային փորձի շարունակական ուսումնասիրություն՝ ՀՀ-ում դրանց զարգացման հիմնական ուղղությունների և հեռանկարների բացահայտման, ինչպես նաև հնարավոր ռիսկերի գնահատման և զսպման նպատակով:

Արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության զարգացման նպատակով Կենտրոնական բանկը շարունակել է միջազգային կառույցների հետ համագործակցությունը: 2018 թ. հունվարին Կենտրոնական բանկը Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության (IOSCO) հետ ստորագրել է Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ փոխըմբռնման բազմակողմանի հուշագիր, որը հնարավորություն է տալիս օտարերկրյա իրավասու մարմինների հետ ապահովելու արդյունավետ համագործակցություն՝ արժեթղթերի շուկայի օրենսդրության խախտումները

---

*[22] Մասնավորապես՝ հիպոտեկային վարկերի հասանելիության ընդլայնման նպատակով «Ազգային հիպոտեկային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն 2018 թ. ընթացքում իրականացրել է ծրագրային վարկերի ընդհանուր պայմանների փոփոխություններ՝ պարզեցնելով վարկավորման ընդհանուր պայմանները: Նշված փոփոխություններով **մինչև 30 տարեկան երիտասարդ մասնագետներին և չամուսնացած անձանց** հնարավորություն է ընձեռվել ստանալու հիպոտեկային վարկեր նորակառույց շենքերում բնակարան ձեռք բերելու համար՝ **7.5% կանխավճարով և մինչև 35 տարի մարման** ժամկետով: Մյուս կողմից՝ **30 տարեկանից բարձր անձանց (ամուսնացածներ և չամուսնացածներ)** համար գործում է **կանխավճարի 10% հնարավորություն**, եթե դրվում է երկրորդ գույքը որպես գրավ կամ ձեռք է բերվում կանխավճարի ապահովագրություն:*

*2018 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ էական բարելավումներ է կատարել նաև «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրում: Մասնավորապես՝ նվազեցվել է վարկավորման առավելագույն տոկոսադրույքը, հանվել է շահառուներից յուրաքանչյուրի տարիքային սահմանափակումը և մնացել միայն ամուսինների գումարային տարիքի սահմանափակումը, որը 65-ի փոխարեն դարձել է 70 տարի, շահառուներին հնարավորություն է ընձեռվել ձեռք բերելու բնակարաններ անմիջապես կառուցապատողից (առաջնային շուկայից)՝ մատչելի պայմաններով (տարեկան առավելագույն տոկոսադրույքը 7.5% է, որը եկամտային հարկի վերադարձից հետո գրեթե հավասարվում է զրոյի), ներդրվել է հիպոտեկային ապահովագրության պրոդուկտը, որի շնորհիվ ծրագրի շահառուները հնարավորություն են ստացել այդ ապահովագրությունը ձեռք բերելու դեպքում ավելի ցածր կանխավճարով, մասնավորապես՝ 7.5% և 10%, (համապատասխանաբար՝ առաջնային շուկայից և երկրորդային շուկայից) ձեռք բերելու բնակարաններ: 2019 թվականին ևս այս ծրագրում նախատեսվում են էական բարելավումներ:*

կանխելու և բացահայտելու նպատակով՝ ստեղծելով ներդրողների շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ: 2018 թ. հունիսին Կենտրոնական բանկը դարձել է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (ICMA) անդամ, որը լայն հնարավորություններ է ընձեռում կապիտալի շուկայում լավագույն չափորոշիչների ներդրման համար:

2018 թվականին Կենտրոնական բանկը նախաձեռնել է ֆորեքս գործարքների և լևերիջով այլ գործարքների հետ կապված ծառայություններ մատուցող միջնորդների կարգավորման գործընթաց: Դրա շրջանակում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց համար սահմանված լիցենզավորման և կարգավորման ռեժիմը տարածվել է նաև ֆորեքս շուկայում լևերիջով գործարքների հետ կապված ներդրումային ծառայություններ մատուցող անձանց վրա: Ընդ որում, այդպիսի ծառայությունները թույլատրվել է մատուցել միայն պրոֆեսիոնալ հաճախորդներին, այսինքն՝ այն հաճախորդներին, ովքեր ունեն համապատասխան փորձ և գիտելիքներ այդ գործարքներից բխող ռիսկերը հասկանալու և ինքնուրույն ներդրումային որոշումներ կայացնելու համար: Կարգավորման նման մոտեցումը կստեղծի ֆորեքս գործարքների և լևերիջով այլ գործարքների հետ կապված ներդրողների շահերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ:

Կապիտալի շուկայի բարեփոխումների շրջանակներում 2019 թվականի ընթացքում աշխատանքներ կիրականացվեն պետական բաժնեմասերի մասնավորեցման ժամանակ ֆոնդային բորսայում աճուրդի միջոցով վաճառքի եղանակի խթանման ուղղությամբ՝ հանրության և մասնավոր ներդրողների համար հեռանկարային ընկերություններն ավելի հասանելի դարձնելու և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Միևնույն ժամանակ, մասնավոր ընկերությունների համար այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրները խթանելու, թափանցիկությունը բարձրացնելու և հանրության լայն շերտերին ընկերությունների բաժնետեր դառնալու հնարավորություն ստեղծելու նպատակով կձեռնարկվեն մասնավոր հատվածի ընկերությունների կողմից կապիտալի շուկայի գործիքների (բաժնետոմսեր, պարտատոմսեր) օգտագործմամբ ֆինանսավորման ներգրավման խրախուսման աշխատանքներ:

Ֆինանսական շուկաների զարգացումները հանգեցրել են կանոնների վրա հիմնված վերահսկողական մոդելից ռիսկերի վրա հիմնված և ապագային միտված վերահսկողության մոտեցման ներդրմանը: Իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են վերահսկողական ռեսուրսների առավել օպտիմալ բաշխմանը և վերահսկողության գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

### *ՀՀ սպառողների շահերի պաշտպանության և այս ուղղությամբ վերահսկողության զարգացման հեռանկարները*

Սպառողների շահերի պաշտպանության ոլորտում շարունակական են լինելու կարգավորման դաշտի զարգացմանն ուղղված աշխատանքները:

Տեխնոլոգիական զարգացումներին համահունչ՝ առցանց տրամադրվող ֆինանսական ծառայությունների համար նույնպես մշակվելու են սպառողների շահերը պաշտպանող կանոններ, ընթացակարգեր և ձևաչափեր:

Իրականացվելու են խոր վերլուծություններ սպառողներից ստացված բողոքների վերաբերյալ ԿԲ-ում առկա տեղեկատվական բազաների, Ֆինանսական համակարգի հաշտարարից և ֆինանսական կազմակերպություններից հավաքագրված տեղեկատվական բազաների հիման վրա: Ստացված արդյունքների միջոցով

հնարավոր կլինի վեր հանել սպառողների շահերի պաշտպանության ոլորտի համակարգային խնդիրները և մշակել թիրախային քաղաքականություն:

Շարունակական են լինելու գործարար վարվելակերպի՝ ռիսկերի վրա հիմնված վերահսկողության կիրարկմանն ուղղված միջոցառումները:

ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն (ՖԿԱՌ) շրջանակում հետագա տարիներին շարունակվելու են տարբեր թիրախային խմբերի համար իրականացվող ծրագրերը: «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի ներքո շարունակվելու են ուսուցիչների վերապատրաստումները ՀՀ ողջ տարածքում՝ մինչև 2021 թ. ներգրավելով մոտ 12000 ուսուցչի: «Ֆինանսական կրթությունը գյուղական համայնքներում» ծրագրի ներքո շարունակվելու են դասընթացները՝ ընդգրկելով նոր գյուղական համայնքներ: Շարունակվելու են նաև բնակչության տարբեր թիրախային խմբերի համար իրականացվող իրազեկման ծրագրերը: Բնակչության ֆինանսական ունակությունների մակարդակը գնահատելու նպատակով 2019 թ. իրականացվելու է «Ֆինանսական ունակությունների բարոմետր» հետազոտությունը՝ որի հիման վրա մշակվելու է ՖԿԱՌ-ի 2020-2024 թթ. գործողությունների ծրագիրը: Վերոնշյալ միջոցառումների և նոր ծրագրերի զարգացման և իրականացման նպատակով շարունակվելու է ակտիվ համագործակցությունը մասնավոր, պետական և հասարակական կազմակերպությունների հետ:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Հավելված 1. ՀՀ տարածքում գործող բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

***Ակտիվներ***

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշներ | Արժույթ | 31.12.15 | 31.12.16 | 31.12.17 | Փոփոխությունը 31.12.17-31.12.16 | 31.03.18 | Փոփոխությունը 31.03.18-31.12.17 | 30.06.18 | Փոփոխությունը 30.06.18-31.03.18 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ | Դ | 66704719 | 62927868 | 69267383 | 10.1% | 58114473 | -16.1% | 59507899 | 2.4% |
| | Ա | 63960449 | 57483961 | 62361373 | 8.5% | 61511300 | -1.4% | 70803874 | 15.1% |
| Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ | Դ | 324225627 | 325942801 | 377683029 | 15.9% | 400163666 | 6.0% | 356418680 | -10.9% |
| | Ա | 182845238 | 255785015 | 177022473 | -30.8% | 137919957 | -22.1% | 94085586 | -31.8% |
| Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ | Դ | 26456542 | 41354673 | 54784329 | 32.5% | 60987567 | 11.3% | 63027002 | 3.3% |
| | Ա | 181144654 | 120944233 | 167516944 | 38.5% | 216916994 | 29.5% | 209728536 | -3.3% |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | Դ | 32468204 | 39730887 | 62585677 | 57.5% | 60854942 | -2.8% | 68974754 | 13.3% |
| | Ա | 9951280 | 15464146 | 24107243 | 55.9% | 20716761 | -14.1% | 19560741 | -5.6% |
| Պետական արժեթղթեր | | 253329656 | 427552994 | 487979686 | 14.1% | 495482349 | 1.5% | 476824405 | -3.8% |
| Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների) | Դ | 15495296 | 23391339 | 24291856 | 3.8% | 25461738 | 4.8% | 21765514 | -14.5% |
| | Ա | 2736 | 3064 | 13220344 | 431373.4% | 10692937 | -19.1% | 10741495 | 0.5% |
| Վարկեր իրավաբանական անձանց | Դ | 188179078 | 318069245 | 305098200 | -4.1% | 313076433 | 2.6% | 350245087 | 11.9% |
| | Ա | 986798916 | 1097988400 | 1249632886 | 13.8% | 1294645992 | 3.6% | 1350912162 | 4.3% |
| Վարկեր ֆիզիկական անձանց | Դ | 434705440 | 451700598 | 555489846 | 23.0% | 599559991 | 7.9% | 651060465 | 8.6% |
| | Ա | 302813167 | 285311011 | 285023914 | -0.1% | 283712638 | -0.5% | 286945138 | 1.1% |
| Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին | Դ | 49489002 | 53278488 | 57407467 | 7.7% | 34079178 | -40.6% | 38504566 | 13.0% |
| | Ա | 48823246 | 113152354 | 64184969 | -43.3% | 53665374 | -16.4% | 63824325 | 18.9% |
| Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ | | -75727235 | -90375463 | -82004610 | -9.3% | -85864033 | 4.7% | -93859965 | 9.3% |
| Հաշվարկված ստացվելիք տոկոսներ | Դ | 18407180 | 21519788 | 28154579 | 30.8% | 26625668 | -5.4% | 27762514 | 4.3% |
| | Ա | 48230560 | 55868810 | 48225308 | -13.7% | 49404948 | 2.4% | 50780809 | 2.8% |
| Հիմնական միջոցներ | | 87566810 | 95130809 | 98354475 | 3.4% | 96091040 | -2.3% | 97842191 | 1.8% |
| Այլ արժեթղթեր | Դ | 27548444 | 27351688 | 38121336 | 39.4% | 35192310 | -7.7% | 37703928 | 7.1% |
| | Ա | 6156816 | 12451328 | 12504201 | 0.4% | 16799511 | 34.4% | 23391131 | 39.2% |
| Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի) | Դ | 11782909 | 12538244 | 20066713 | 60.0% | 16287748 | -18.8% | 16468601 | 1.1% |
| | Ա | 16232697 | 7502210 | 8437703 | 12.5% | 8286471 | -1.8% | 7830680 | -5.5% |
| Այլ ակտիվներ | | 149489380 | 162458658 | 154474134 | -4.9% | 155568930 | 0.7% | 161772719 | 4.0% |
| **Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ** | | **3457080811** | **3994527150** | **4363991458** | **9.2%** | **4434335465** | **1.6%** | **4522622836** | **2.0%** |

*Ակտիվներ* *հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշներ | Արժույթ | 30.09.18 | Փոփոխությունը 30.09.18–30.06.18 | 31.12.18 | Փոփոխությունը 31.12.18–30.09.18 | Փոփոխությունը 31.12.18–31.12.17 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ | Դ | 64451414 | 8.3% | 88119467 | 36.7% | 18852084 | 27.2% |
| | Ա | 67610623 | -4.5% | 70163652 | 3.8% | 7802279 | 12.5% |
| Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ | Դ | 374412101 | 5.0% | 364122346 | -2.7% | -13560683 | -3.6% |
| | Ա | 184593408 | 96.2% | 244798172 | 32.6% | 67775699 | 38.3% |
| Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ | Դ | 38140472 | -39.5% | 34154450 | -10.5% | -20629879 | -37.7% |
| | Ա | 245836050 | 17.2% | 218634038 | -11.1% | 51117094 | 30.5% |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | Դ | 76980043 | 11.6% | 74356915 | -3.4% | 11771238 | 18.8% |
| | Ա | 19710538 | 0.8% | 25711719 | 30.4% | 1604476 | 6.7% |
| Պետական արժեթղթեր | | 528544717 | 10.8% | 549596131 | 4.0% | 61616444 | 12.6% |
| Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների) | Դ | 22969369 | 5.5% | 23750006 | 3.4% | -541850 | -2.2% |
| | Ա | 447678 | -95.8% | 0 | -100.0% | -13220344 | -100.0% |
| Վարկեր իրավաբանական անձանց | Դ | 370102596 | 5.7% | 400496270 | 8.2% | 95398069 | 31.3% |
| | Ա | 1331449063 | -1.4% | 1319295955 | -0.9% | 69663069 | 5.6% |
| Վարկեր ֆիզիկական անձանց | Դ | 707172373 | 8.6% | 802708644 | 13.5% | 247218798 | 44.5% |
| | Ա | 285443482 | -0.5% | 289517867 | 1.4% | 4493953 | 1.6% |
| Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին | Դ | 49687756 | 29.0% | 54660757 | 10.0% | -2746711 | -4.8% |
| | Ա | 68662049 | 7.6% | 66248650 | -3.5% | 2063681 | 3.2% |
| Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ | | -107582328 | 14.6% | -87883303 | -18.3% | -5878693 | 7.2% |
| Հաշվարկված ստացվելիք տոկոսներ | Դ | 30531967 | 10.0% | 32877378 | 7.7% | 4722799 | 16.8% |
| | Ա | 52864714 | 4.1% | 49170503 | -7.0% | 945195 | 2.0% |
| Հիմնական միջոցներ | | 98821761 | 1.0% | 101184873 | 2.4% | 2830399 | 2.9% |
| Այլ արժեթղթեր | Դ | 39028207 | 3.5% | 39239382 | 0.5% | 1118046 | 2.9% |
| | Ա | 26137976 | 11.7% | 33367953 | 27.7% | 20863751 | 166.9% |
| Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի) | Դ | 16129039 | -2.1% | 17221399 | 6.8% | -2845314 | -14.2% |
| | Ա | 9488985 | 21.2% | 12293002 | 29.6% | 3855299 | 45.7% |
| Այլ ակտիվներ | | 165642197 | 2.4% | 162642749 | -1.8% | 8168615 | 5.3% |
| **Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ** | | **4767276249** | **5.4%** | **4986448973** | **4.6%** | **622457515** | **14.3%** |

## Հավելված 1 *(շարունակություն)*

***Պարտավորություններ***

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշներ | Արժույթ | 31.12.15 | 31.12.16 | 31.12.17 | Փոփոխությունը 31.12.17-31.12.16 | 31.03.18 | Փոփոխությունը 31.03.18-31.12.17 | 30.06.18 | Փոփոխությունը 30.06.18-31.03.18 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բանկերի թղթակցային հաշիվները | Դ | 2626454 | 8440341 | 2845202 | -66.3% | 2552854 | -10.3% | 2701678 | 5.8% |
| | Ա | 12466336 | 24145523 | 6633064 | -72.5% | 11337448 | 70.9% | 20924919 | 84.6% |
| Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ՝ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | Դ | 384250266 | 408535074 | 408786262 | 0.1% | 410467921 | 0.4% | 457772051 | 11.5% |
| | Ա | 551584126 | 494640562 | 501416502 | 1.4% | 520796240 | 3.9% | 556851560 | 6.9% |
| Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ | Դ | 121027717 | 149711854 | 192412677 | 28.5% | 186650745 | -3.0% | 183690742 | -1.6% |
| | Ա | 207121949 | 290000626 | 299515471 | 3.3% | 288951599 | -3.5% | 259891231 | -10.1% |
| Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ | Դ | 87644084 | 108067585 | 140115811 | 29.7% | 137613801 | -1.8% | 142922971 | 3.9% |
| | Ա | 134169937 | 134366872 | 168454022 | 25.4% | 185698643 | 10.2% | 186016639 | 0.2% |
| Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ | Դ | 88871613 | 159645174 | 189203673 | 18.5% | 191187224 | 1.0% | 184702847 | -3.4% |
| | Ա | 193300401 | 251547964 | 229765566 | -8.7% | 225425989 | -1.9% | 230293341 | 2.2% |
| Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ | Դ | 215736211 | 283050858 | 394555152 | 39.4% | 416077165 | 5.5% | 412092140 | -1.0% |
| | Ա | 741403154 | 801053009 | 850231154 | 6.1% | 835037817 | -1.8% | 813727856 | -2.6% |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ | Դ | 42013865 | 38852734 | 32032952 | -17.6% | 30772930 | -3.9% | 31431875 | 2.1% |
| | Ա | 4947020 | 4497586 | 3785570 | -15.8% | 3823288 | 1.0% | 3592900 | -6.0% |
| Հաշվարկված վճարվելիք տոկոսներ | Դ | 14255867 | 17432083 | 23194587 | 33.1% | 21417446 | -7.7% | 21589245 | 0.8% |
| | Ա | 20030336 | 24093966 | 21127431 | -12.3% | 19748924 | -6.5% | 22905774 | 16.0% |
| Այլ պարտավորություններ | Դ | 54079492 | 77067556 | 88459718 | 14.8% | 73972906 | -16.4% | 85371518 | 15.4% |
| | Ա | 67502141 | 65802951 | 125989806 | 91.5% | 37782844 | -70.0% | 43674033 | 15.6% |
| **Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ** | | **2943030970** | **3340952319** | **3678524620** | **10.1%** | **3718373680** | **1.1%** | **3797861908** | **2.1%** |
| | | | | | | | | | |
| Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ | | 364121379 | 458005247 | 463716670 | 1.2% | 478143334 | 3.1% | 481143334 | 0.6% |
| Գլխավոր պահուստ | | 30671613 | 31927022 | 33386620 | 4.6% | 33386619 | 0.0% | 38528398 | 15.4% |
| Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր | | 0 | 0 | 0 | | | | | |
| Չբաշխված շահույթ — Ընթացիկ ժամանակաշրջանի | | -20356731 | 31659531 | 40412056 | 27.6% | 14723164 | -63.6% | 29460650 | 100.1% |
| Չբաշխված շահույթ — Նախորդ ժամանակաշրջանի | | 122137908 | 87913386 | 93719676 | 6.6% | 136994219 | 46.2% | 126632004 | -7.6% |
| **Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ** | | **514049841** | **653590549** | **685466839** | **4.9%** | **715961785** | **4.4%** | **724760928** | **1.2%** |

*Պարտավորություններ* *հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշներ | | Արժույթ | 30.09.18 | Փոփոխությունը 30.09.18-30.06.18 | | 31.12.18 | Փոփոխությունը 31.12.18-30.09.18 | | Փոփոխությունը 31.12.18-31.12.17 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բանկերի թղթակցային հաշիվները | | Դ | 3178366 | 17.6% | | 2663439 | -16.2% | | -181763 | -6.4% |
| | | Ա | 18613142 | -11.0% | | 12786849 | -31.3% | | 6153785 | 92.8% |
| Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ՝ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | | Դ | 526171102 | 14.9% | | 568870898 | 8.1% | | 160084636 | 39.2% |
| | | Ա | 535168680 | -3.9% | | 533285898 | -0.4% | | 31869395 | 6.4% |
| Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ | | Դ | 194365302 | 5.8% | | 209793343 | 7.9% | | 17380666 | 9.0% |
| | | Ա | 383101342 | 47.4% | | 414820032 | 8.3% | | 115304561 | 38.5% |
| Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ | | Դ | 151502251 | 6.0% | | 173147547 | 14.3% | | 33031736 | 23.6% |
| | | Ա | 199048964 | 7.0% | | 210660644 | 5.8% | | 42206622 | 25.1% |
| Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ | | Դ | 165862962 | -10.2% | | 166506877 | 0.4% | | -22696796 | -12.0% |
| | | Ա | 229824040 | -0.2% | | 231731617 | 0.8% | | 1966051 | 0.9% |
| Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ | | Դ | 435786405 | 5.7% | | 464371910 | 6.6% | | 69816758 | 17.7% |
| | | Ա | 829206620 | 1.9% | | 857291824 | 3.4% | | 7060670 | 0.8% |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ | | Դ | 30217253 | -3.9% | | 30467120 | 0.8% | | -1565832 | -4.9% |
| | | Ա | 3600524 | 0.2% | | 3378240 | -6.2% | | -407330 | -10.8% |
| Հաշվարկված վճարվելիք տոկոսներ | | Դ | 24292838 | 12.5% | | 23993753 | -1.2% | | 799166 | 3.4% |
| | | Ա | 20588185 | -10.1% | | 22543651 | 9.5% | | 1416220 | 6.7% |
| Այլ պարտավորություններ | | Դ | 93326308 | 9.3% | | 132342231 | 41.8% | | 43882513 | 49.6% |
| | | Ա | 42703915 | -2.2% | | 179169936 | 319.6% | | 53180130 | 42.2% |
| **Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ** | | | **4028956907** | **6.1%** | | **4237825809** | **5.2%** | | **559301189** | **15.2%** |
| | | | | | | | | | | |
| Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ | | | 481143333 | 0.0% | | 505091490 | 5.0% | | 41374820 | 8.9% |
| Գլխավոր պահուստ | | | 48528397 | 26.0% | | 45870976 | -5.5% | | 12484357 | 37.4% |
| Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր | | | | | | | | | | |
| Չբաշխված շահույթ | Ընթացիկ ժամանակաշրջանի | | 42908693 | 45.6% | | 37467428 | -12.7% | | -2944628 | -7.3% |
| | Նախորդ ժամանակաշրջանի | | 113372587 | -10.5% | | 109883981 | -3.1% | | 16164305 | 17.2% |
| **Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ** | | | **738319343** | **1.9%** | | **748623164** | **1.4%** | | **63156325** | **9.2%** |

*Դ - ՀՀ դրամ* *Ա – Արտարժույթ*

## Հավելված 2. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների կառուցվածքի միտումները *(%)*

***Ակտիվներ***

| Ցուցանիշներ | Արժույթ | 31.12.15 | 31.12.16 | 31.12.17 | Փոփոխությունը 31.12.17-31.12.16 | 31.03.18 | Փոփոխությունը 31.03.18-31.12.17 | 30.06.18 | Փոփոխությունը 30.06.18-31.03.18 | 30.09.18 | Փոփոխությունը 30.09.18-30.06.18 | 31.12.18 | Փոփոխությունը 31.12.18-30.09.18 | Փոփոխությունը 31.12.18-31.12.17 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ | Դ | 1.9 | 1.6 | 1.6 | 0.0 | 1.3 | -0.3 | 1.3 | 0.0 | 1.4 | 0.0 | 1.8 | 0.4 | 0.2 |
| | Ա | 1.9 | 1.4 | 1.4 | 0.0 | 1.4 | -0.1 | 1.6 | 0.2 | 1.4 | -0.1 | 1.4 | 0.0 | 0.0 |
| Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ | Դ | 9.4 | 8.2 | 8.7 | 0.5 | 9.0 | 0.3 | 7.9 | -1.1 | 7.9 | 0.0 | 7.3 | -0.6 | -1.4 |
| | Ա | 5.3 | 6.4 | 4.1 | -2.3 | 3.1 | -1.0 | 2.1 | -1.0 | 3.9 | 1.8 | 4.9 | 1.0 | 0.9 |
| Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ | Դ | 0.8 | 1.0 | 1.3 | 0.2 | 1.4 | 0.1 | 1.4 | 0.0 | 0.8 | -0.6 | 0.7 | -0.1 | -0.6 |
| | Ա | 5.2 | 3.0 | 3.8 | 0.8 | 4.9 | 1.0 | 4.6 | -0.2 | 5.2 | 0.5 | 4.4 | -0.8 | 0.5 |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | Դ | 0.9 | 1.0 | 1.4 | 0.4 | 1.4 | -0.1 | 1.5 | 0.2 | 1.6 | 0.1 | 1.5 | -0.1 | 0.1 |
| | Ա | 0.3 | 0.4 | 0.6 | 0.2 | 0.5 | -0.1 | 0.4 | 0.0 | 0.4 | 0.0 | 0.5 | 0.1 | 0.0 |
| Պետական արժեթղթեր | | 7.3 | 10.7 | 11.2 | 0.5 | 11.1 | -0.1 | 10.5 | -0.5 | 11.1 | 0.5 | 11.0 | -0.1 | -0.2 |
| Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների) | Դ | 0.4 | 0.6 | 0.6 | 0.0 | 0.6 | 0.0 | 0.5 | -0.1 | 0.5 | 0.0 | 0.5 | 0.0 | -0.1 |
| | Ա | 0.0 | 0.0 | 0.3 | 0.3 | 0.2 | -0.1 | 0.2 | 0.0 | 0.0 | -0.2 | 0.0 | 0.0 | -0.3 |
| Վարկեր իրավաբանական անձանց | Դ | 5.4 | 8.0 | 7.0 | -1.0 | 7.0 | 0.0 | 7.7 | 0.7 | 7.8 | 0.0 | 8.0 | 0.3 | 1.0 |
| | Ա | 28.5 | 27.5 | 28.6 | 1.1 | 29.0 | 0.3 | 29.9 | 0.9 | 27.9 | -1.9 | 26.5 | -1.5 | -2.2 |
| Վարկեր ֆիզիկական անձանց | Դ | 12.6 | 11.3 | 12.7 | 1.4 | 13.4 | 0.7 | 14.4 | 1.0 | 14.8 | 0.4 | 16.1 | 1.3 | 3.4 |
| | Ա | 8.8 | 7.1 | 6.5 | -0.6 | 6.3 | -0.2 | 6.3 | 0.0 | 6.0 | -0.4 | 5.8 | -0.2 | -0.7 |
| Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին | Դ | 1.4 | 1.3 | 1.3 | 0.0 | 0.8 | -0.6 | 0.9 | 0.1 | 1.0 | 0.2 | 1.1 | 0.1 | -0.2 |
| | Ա | 1.4 | 2.8 | 1.5 | -1.4 | 1.2 | -0.3 | 1.4 | 0.2 | 1.4 | 0.0 | 1.3 | -0.1 | -0.1 |
| Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ | | -2.2 | -2.3 | -1.9 | 0.4 | -1.9 | 0.0 | -2.1 | -0.2 | -2.3 | -0.2 | -1.8 | 0.5 | 0.1 |
| Հաշվարկված ստացվելիք տոկոսներ | Դ | 0.5 | 0.5 | 0.6 | 0.1 | 0.6 | 0.0 | 0.6 | 0.0 | 0.6 | 0.0 | 0.7 | 0.0 | 0.0 |
| | Ա | 1.4 | 1.4 | 1.1 | -0.3 | 1.1 | 0.0 | 1.1 | 0.0 | 1.1 | 0.0 | 1.0 | -0.1 | -0.1 |
| Հիմնական միջոցներ | | 2.5 | 2.4 | 2.3 | -0.1 | 2.1 | -0.1 | 2.2 | 0.0 | 2.1 | -0.1 | 2.0 | 0.0 | -0.2 |
| Այլ արժեթղթեր | Դ | 0.8 | 0.7 | 0.9 | 0.2 | 0.8 | -0.1 | 0.8 | 0.0 | 0.8 | 0.0 | 0.8 | 0.0 | -0.1 |
| | Ա | 0.2 | 0.3 | 0.3 | 0.0 | 0.4 | 0.1 | 0.5 | 0.1 | 0.5 | 0.0 | 0.7 | 0.1 | 0.4 |
| Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի) | Դ | 0.3 | 0.3 | 0.5 | 0.1 | 0.4 | -0.1 | 0.4 | 0.0 | 0.3 | 0.0 | 0.3 | 0.0 | -0.1 |
| | Ա | 0.5 | 0.2 | 0.2 | 0.0 | 0.2 | 0.0 | 0.2 | 0.0 | 0.2 | 0.0 | 0.2 | 0.0 | 0.1 |
| Այլ ակտիվներ | | 4.8 | 4.7 | 4.4 | -0.3 | 4.3 | -0.1 | 4.3 | 0.0 | 4.0 | -0.3 | 3.7 | -0.2 | -0.7 |
| **Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ** | | **100.0** | **100.0** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **0.0** |

*Պասիվներ*

| Ցուցանիշներ | | Արժույթ | 31.12.15 | 31.12.16 | 31.12.17 | Փոփոխությունը 31.12.17-31.12.16 | 31.03.18 | Փոփոխությունը 31.03.18-31.12.17 | 30.06.18 | Փոփոխությունը 30.06.18-31.03.18 | 30.09.18 | Փոփոխությունը 30.09.18-30.06.18 | 31.12.18 | Փոփոխությունը 31.12.18-30.09.18 | Փոփոխությունը 31.12.18-31.12.17 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բանկերի թղթակցային հաշիվները | | Դ | 0.1 | 0.3 | 0.1 | -0.2 | 0.1 | 0.0 | 0.1 | 0.0 | 0.1 | 0.0 | 0.1 | 0.0 | 0.0 |
| | | Ա | 0.4 | 0.7 | 0.2 | -0.5 | 0.3 | 0.1 | 0.6 | 0.2 | 0.5 | -0.1 | 0.3 | -0.2 | 0.1 |
| Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ՝ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | | Դ | 13.1 | 12.2 | 11.1 | -1.1 | 11.0 | -0.1 | 12.1 | 1.0 | 13.1 | 1.0 | 13.4 | 0.4 | 2.3 |
| | | Ա | 18.7 | 14.8 | 13.6 | -1.2 | 14.0 | 0.4 | 14.7 | 0.7 | 13.3 | -1.4 | 12.6 | -0.7 | -1.0 |
| Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ | | Դ | 4.1 | 4.5 | 5.2 | 0.7 | 5.0 | -0.2 | 4.8 | -0.2 | 4.8 | 0.0 | 5.0 | 0.1 | -0.3 |
| | | Ա | 7.0 | 8.7 | 8.1 | -0.5 | 7.8 | -0.4 | 6.8 | -0.9 | 9.5 | 2.7 | 9.8 | 0.3 | 1.6 |
| Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ | | Դ | 3.0 | 3.2 | 3.8 | 0.6 | 3.7 | -0.1 | 3.8 | 0.1 | 3.8 | 0.0 | 4.1 | 0.3 | 0.3 |
| | | Ա | 4.6 | 4.0 | 4.6 | 0.6 | 5.0 | 0.4 | 4.9 | -0.1 | 4.9 | 0.0 | 5.0 | 0.0 | 0.4 |
| Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ | | Դ | 3.0 | 4.8 | 5.1 | 0.4 | 5.1 | 0.0 | 4.9 | -0.3 | 4.1 | -0.7 | 3.9 | -0.2 | -1.2 |
| | | Ա | 6.6 | 7.5 | 6.2 | -1.3 | 6.1 | -0.2 | 6.1 | 0.0 | 5.7 | -0.4 | 5.5 | -0.2 | -0.8 |
| Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ | | Դ | 7.3 | 8.5 | 10.7 | 2.3 | 11.2 | 0.5 | 10.9 | -0.3 | 10.8 | 0.0 | 11.0 | 0.1 | 0.2 |
| | | Ա | 25.2 | 24.0 | 23.1 | -0.9 | 22.5 | -0.7 | 21.4 | -1.0 | 20.6 | -0.8 | 20.2 | -0.4 | -2.9 |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ | | Դ | 1.4 | 1.2 | 0.9 | -0.3 | 0.8 | 0.0 | 0.8 | 0.0 | 0.8 | -0.1 | 0.7 | 0.0 | -0.2 |
| | | Ա | 0.2 | 0.1 | 0.1 | 0.0 | 0.1 | 0.0 | 0.1 | 0.0 | 0.1 | 0.0 | 0.1 | 0.0 | 0.0 |
| Հաշվարկված վճարվելիք տոկոսներ | | Դ | 0.5 | 0.5 | 0.6 | 0.1 | 0.6 | -0.1 | 0.6 | 0.0 | 0.6 | 0.0 | 0.6 | 0.0 | -0.1 |
| | | Ա | 0.7 | 0.7 | 0.6 | -0.1 | 0.5 | 0.0 | 0.6 | 0.1 | 0.5 | -0.1 | 0.5 | 0.0 | 0.0 |
| Այլ պարտավորություններ | | Դ | 1.8 | 2.3 | 2.4 | 0.1 | 2.0 | -0.4 | 2.2 | 0.3 | 2.3 | 0.1 | 3.1 | 0.8 | 0.7 |
| | | Ա | 2.3 | 2.0 | 3.4 | 1.5 | 1.0 | -2.4 | 1.1 | 0.1 | 1.1 | -0.1 | 4.2 | 3.2 | 0.8 |
| **Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ** | | | **100.0** | **100.0** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **0.0** |
| Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ | | | 70.8 | 70.1 | 67.6 | -2.4 | 66.8 | -0.9 | 66.4 | -0.4 | 65.2 | -1.2 | 67.5 | 2.3 | -0.2 |
| Գլխավոր պահուստ | | | 6.0 | 4.9 | 4.9 | 0.0 | 4.7 | -0.2 | 5.3 | 0.7 | 6.6 | 1.3 | 6.1 | -0.4 | 1.3 |
| Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր | | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Չբաշխված շահույթ (վնաս) | Ընթացիկ ժամանակաշրջանի | | -4.0 | 4.8 | 5.9 | 1.1 | 2.1 | -3.8 | 4.1 | 2.0 | 5.8 | 1.7 | 5.0 | -0.8 | -0.9 |
| | Նախորդ ժամանակաշրջանի | | 23.8 | 13.5 | 13.7 | 0.2 | 19.1 | 5.5 | 17.5 | -1.7 | 15.4 | -2.1 | 14.7 | -0.7 | 1.0 |
| **Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ** | | | **100.0** | **100.0** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **100.0** | **x** | **0.0** |

*Դ - ՀՀ դրամ* *Ա – Արտարժույթ*

## Հավելված 3. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի նորմատիվային կապիտալի հաշիվների փոփոխությունը

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշներ | Մեծությունը ժամանակաշրջանի սկզբին | Փոփոխություն ժամանակաշրջանի ընթացքում | Մեծությունը ժամանակաշրջանի վերջին |
|---|---|---|---|
| **Ընդհանուր կապիտալ** | **684147342** | **39050397** | **723197739** |
| **Հիմնական կապիտալ** | **564251620** | **52101066** | **616352686** |
| Սովորական բաժնետոմսեր + էմիսիոն եկամուտ - զեղչ | 456965637 | 38374820 | 495340457 |
| Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ) | 215967071 | 1522012 | 217489083 |
| Գլխավոր պահուստ | 33386619 | 12440042 | 45826661 |
| Չբաշխված շահույթ՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով | 134938084 | 12681710 | 147619794 |
| Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ, այդ թվում՝ | 67789753 | 14395506 | 82185258 |
| Երկարաժամկետ ստորադաս փոխատվություններ | 0 | 241875 | 241875 |
| Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր | 0 | 0 | 0 |
| Գրավի առարկայի տնօրինման արդյունքում բանկի սեփականությանն անցած բաժնետոմսեր ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերության | 649378 | -60 | 649318 |
| Ոչ նյութական ակտիվներ ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության | 9621911 | 7171711 | 16793622 |
| Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և «Կանոնակարգ 2-ով նախատեսված այլ անձանց» կանոնադրական կապիտալներում ներդրումներ | 2787054 | 1907222 | 4694276 |
| Նյութական ակտիվներ ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության | 46504075 | 2714507 | 49218582 |
| Բանկի կողմից վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ | 6554972 | 1031761 | 7586733 |
| Այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի | 50210 | 0 | 50210 |
| Հետաձգված հարկային ակտիվների և հետաձգված հարկային պարտավորությունների դրական տարբերություն | 1622153 | 173532 | 1795685 |
| **Լրացուցիչ կապիտալ** | **119895722** | **-13050669** | **106845053** |
| Բանկի գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստ ըստ կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «ա» ենթակետի | 24126557 | -1956514 | 22170043 |
| Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ | 0 | 0 | 0 |
| Բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններ ըստ կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «ե» ենթակետի | 77898894 | -6934316 | 70964578 |
| Այլ պահուստներ «բացի Կանոնակարգ 2-ով նախատեսված բացառությունների» | 27852689 | -5552810 | 22299880 |

## Հավելված 4. ՀՀ բանկային համակարգի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների մասնակցությունը

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշներ | 31.12.15 | Փոփոխությունը 31.12.16-31.12.15 | 31.12.16 | Փոփոխությունը 31.12.17-31.12.16 | 31.12.17 | Փոփոխությունը 31.12.18-31.12.17 | 31.12.18 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կանոնադրական կապիտալը *(հազար ՀՀ դրամ)* | 336828816 | 72210796 | 409039612 | 14684802 | 423724414 | 32194714 | 455919128 |
| այդ թվում՝ ոչ ռեզիդենտներ *(հազար ՀՀ դրամ)* | 227931352 | 25819212 | 253750565 | 8034872 | 261785437 | 24711687 | 286497123 |
| ոչ ռեզիդենտների տես. կշիռը *(%)* | 67.67 | -5.6 | 62.04 | -0.25 | 61.78 | 1.06 | 62.84 |

## Հավելված 5. ՀՀ տարածքում գործող բանկերի եկամուտները և ծախսերը

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշներ | 31.12.15 | 31.12.16 | 31.12.17 | Փոփոխությունը 31.12.17-31.12.16 | 31.03.18 | 30.06.18 | 30.09.18 | 31.12.18 | Փոփոխությունը 31.12.18-31.12.17 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* |
| Թղթակցային հաշիվներից | 180034 | 107191 | 237187 | 121.3% | 49726 | 110113 | 208152 | 338511 | 42.7% |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներից | 232405 | 742260 | 1171677 | 57.9% | 438665 | 851013 | 880524 | 913106 | -22.1% |
| Առևտրային բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ | 4090447 | 2951806 | 2233260 | -24.3% | 880553 | 1892735 | 2951394 | 4052416 | 81.5% |
| Տնտեսությանը տրված վարկերից | 200647592 | 197863759 | 211971276 | 7.1% | 51637696 | 106315388 | 162768683 | 220340914 | 3.9% |
| Օվերդրաֆտից ստացված տոկոսներ | 33711040 | 33878646 | 33614416 | -0.8% | 8527804 | 17095531 | 26289376 | 35496575 | 5.6% |
| Վարկային քարտերից ստացված տոկոսներ | 22595886 | 20269021 | 22478081 | 10.9% | 5679445 | 11391242 | 16999462 | 23882509 | 6.2% |
| Պետական արժեթղթերից ստացված տոկոսներ | 24767996 | 32115374 | 42545729 | 32.5% | 10727650 | 20952879 | 31503600 | 42715693 | 0.4% |
| Ռեպո համաձայնագրերից | 5242927 | 7394325 | 7561837 | 2.3% | 2215550 | 4183385 | 6255081 | 8128290 | 7.5% |
| Այլ տոկոսային եկամուտներ | 12406916 | 16714652 | 18354722 | 9.8% | 255364 | 563757 | 932939 | 1215703 | -93.4% |
| **Ընդամենը տոկոսային եկամուտներ** | **303875243** | **312037035** | **340168185** | **9.0%** | **83825780** | **169944835** | **259058749** | **351416095** | **3.3%** |

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսներ | 174918 | 234528 | 148939 | -36.5% | 61267 | 138361 | 212479 | 303784 | 104.0% |
| Բանկային հաշիվների ու ցպահանջ ավանդների դիմաց վճարված տոկոսներ | 5028661 | 5184548 | 6313237 | 21.8% | 1734662 | 3304860 | 4927063 | 6688259 | 5.9% |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ | 25332772 | 10461283 | 7414642 | -29.1% | 1903496 | 4048794 | 6838723 | 10597046 | 42.9% |
| Ռեպո համաձայնագրերի դիմաց | 615739 | 2846457 | 2824614 | -0.8% | 674459 | 1289586 | 1894938 | 2596634 | -8.1% |
| Առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ | 41824858 | 42026954 | 44126739 | 5.0% | 9854429 | 20424648 | 31345641 | 42320159 | -4.1% |
| Ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ | 95608944 | 107650612 | 118606200 | 10.2% | 27950558 | 55316664 | 82754492 | 110430139 | -6.9% |
| Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ | 11432956 | 13328086 | 12007156 | -9.9% | 2875738 | 5690893 | 8634941 | 11796696 | -1.8% |
| Տոկոսային ծախսեր ավանդների ապահովագրության դիմաց | 1956592 | 2701700 | 3930896 | 45.5% | 1055705 | 1983015 | 2913737 | 3883814 | -1.2% |
